

2025

**ԻՆՏԵՆՆԵՐԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ**

ՀՀ ք. Երևան Աջափնյակ վարչական շրջան, Կ. Հալաբյան փ. թիվ
16/2

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ /լրամշակված/**



**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«ՄԻՍՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» ՀՄԴ**

**ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ**

Ա/Ձ Ա. Գալոյան
ՀՀ ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com



ԻՆՏԵՆՏԻՎԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ

ՀՀ ք. Երևան Աջափնյակ վարչական շրջան, Կ. Հալաբյան փ. թիվ 16/2

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
/լրամշակված/**

Միմոնյան կրթական հիմնադրամի
գլխավոր տնօրեն՝ Մարի Լու Փափազյան



Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	5
1.2	Հապավումներ	5
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	6
1.4	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը	7
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	11
1.5.1	<i>Ներկա վիճակի նկարագիր</i>	11
1.5.2	<i>Նախատեսվող գործունեության բնութագիր</i>	13
1.5.3	<i>Իրավիճակային հատակագիծ</i>	19
1.5.4	<i>Ժամանակացույց</i>	21
1.5.5	<i>Շինարարական աշխատանքների կազմակերպման հատակագիծ</i>	22
2.	ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՄԱՍ	23
2.1	Ձեռնուցման ու օդափոխության համակարգեր	23
2.1.1	Ջերմամատակարարման աղբյուրները, ջեռուցման և օդափոխության համակարգում ջերմային կրիչների պարամետրերը	23
2.2	Աղմուկից և վիբրացիայից պաշպանության միջոցառումներ	26
2.3	Ավտոմատացում և կառավարում	26
2.4	Էներգախնայողության միջոցառումներ	26
2.5	Ջրամատակարարման, Ջրահեռացման ու Հրդեհամարման Համակարգեր	27
2.5.1	Կենցաղային սառը և տաք ջրերի համակարգ	27
2.5.2	Կոյուղու և օդափոխման համակարգ	28
2.5.3	Հեղեղատար համակարգ	28
2.6	Էլ. մատակարարում	28
2.7	Գազամատակարարում	29
3.	ԿԱՆԱԶՄԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	29
3.1.1	<i>Կանաչ տարածքի ռոռզման ջրապահանջի հաշվարկ</i>	30
4.	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ	35
4.1	Աշխատանքների կատարման սխեմա	36
	Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են	38
4.2	Շինարարության ժամկետները	38
4.3	Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը	38
4.4	Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները	40
	<i>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում</i>	40
5.	ԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՐ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ	42
5.1	Երկրաբանական ուսումնասիրվածության պատմությունը	43
5.2	Շրջանի ընդհանուր երկրաբանական կառուցվածքի համառոտ նկարագրությունը	43
5.3	Տեղամասի ինժեներաերկրաբանական պայմանները	43
5.4	Ինժեներաերկրաբանական էլեմենտների (ԻԵԷ) ֆիզիկամեխանիկական հատկությունները	44
5.5	Կլիման	45
5.6	Օդային ավազան	47
5.7	Ջրային ռեսուրսներ	52
5.8	Հողերի նկարագիրը	52
5.9	Հողային ռեսուրսներ	52
5.10	Բուսական աշխարհ	53
5.11	Կենդանական աշխարհ	53
5.12	Պատմամշակութային հուշարձաններ	54

6.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԿՆԿԱԼ ՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ.....	56
6.1	Շինարարական աշխատանքների ընթացքում ակնկալվող ազդեցություններ.....	57
6.1.1	Օդային ավազանի աղտոտվածություն.....	57
6.1.2	Զրոգտագործում և ջրահեռացում	57
6.1.3	Թափոններ	58
6.1.4	Աղմուկ և թրթռում:.....	59
6.1.5	Մոցիալական ազդեցություն	61
6.1.6	Ազդեցություն բուսական և կենդանական աշխարհի վրա.....	62
6.1.7	Մշակութային ժառանգություն	62
6.1.8	Աշխատողների սանիտարական ցածր աշխատային և հիգիենիկ պահանջներ.....	62
6.1.9	Լանդշաֆտ	63
6.1.10	Մոցիալ-տնտեսական հետևանքներ	63
7.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	64
7.1	Ռիսկերի գնահատում	64
7.2	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	65
7.2.1	<i>Մթնոլորտային օդ</i>	65
7.2.2	<i>Ջրային ռեսուրսներ</i>	66
7.2.3	<i>Հողային ռեսուրսներ</i>	67
7.2.4	<i>Արտակարգ իրավիճակներ</i>	67
7.2.5	<i>Աղմուկ և թրթռում</i>	68
7.2.6	<i>Կենսաբազմազանություն</i>	69
7.2.7	<i>Թափոնների կառավարում</i>	69
7.2.8	<i>Լանդշաֆտ</i>	70
7.2.9	<i>Տարածքի բարեկարգում կանաչապատում</i>	70
7.2.10	<i>Էներգային այդողության միջոցառումներ</i>	71
7.2.11	<i>Շահագործման փուլ</i>	71
8.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	72
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	73
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	77
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	79
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	80

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող՝	«ՄԻՄՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» ՀՄԴ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	ՀՀ ք. Երևան Աջափնյակ վարչական շրջան, Կ. Հալաբյան փ. թիվ 16/2
Նախատեսվող գործունեության հասցեն՝	ՀՀ ք. Երևան Աջափնյակ վարչական շրջան, Կ. Հալաբյան փ. թիվ 16/2
Հեռախոս՝	+37499994222

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից ինժեներական եվ կիրառական գիտությունների համալիր ընդլայնելով ԹՈՒՄՈ Ստեղծարար Տեխնալոգիաների Կենտրոնը:

Ինժեներական եվ կիրառական գիտությունների համալիրի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան Աջափնյակ վարչական շրջան, Կ. Հալաբյան փ. թիվ 16/2 հասցեում:

Ինժեներական եվ կիրառական գիտությունների համալիրի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /2023թ./ 12 հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Ինժեներական եվ կիրառական գիտությունների համալիրի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Երևան քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջան, Կ. Հալաբյան փ. թիվ 16/2 հասցեում Ինժեներական եվ կիրառական գիտությունների համալիրի կառուցում աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2023թ.) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 12-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ» ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը

հասակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-121 (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության ինչպես նաև իրավական և կազմակերպական հիմքերը ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

ՀՀ ջրային օրենսգրք 2002թ. - Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, օրենքներով և իրավական այլ ակտերով: *Ջրային հարաբերություններ*՝ ջրային ռեսուրսների, ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի և ՀՏԿ-ների կամ դրանց մասի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:

2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ.

«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 2000թ.

«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը,

«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ. N 72-Ն որոշումը

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման,

պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշում:

ՀՀ կառավարության 02.11.2017թ. N 1404-Ն «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի n 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում:

ՀՀ կառավարության 08.09.2011թ. N 1396-Ն «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի n 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու եվ 2001 թվականի ապրիլի 12-ի n 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշում:

2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթ,

Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետ,

Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իզ» պարբերություն,

Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթներ:

ՀՀ Կառավարություն 8 փետրվարի 2018 թվականի n 108-ն ու ը ու ղ ու մ «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի n 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N 764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Ներկա վիճակի նկարագիր

Ինժեներական եվ կիրառական գիտությունների համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Աջափնյակ վարչական շրջան, Կ. Հալաբյան փ. թիվ 16/2 հասցեում հասցեում:

Հողամասի բնութագրեր՝

Կադաստրային ծածկագիրը՝ 01-001-0007-0225

Մակերեսի չափը (հա)՝ 1.5

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հողատարածքը սահմանափակված է արևմուտքից ԹՈՒՄՈ կենտրոնի շենքով ու բացօթյա ավտոկանգառով, իսկ հյուսիսից, արևելքից ու հարավից՝ Հրազդան գետի ձորով: Հողամասը իրենից ներկայացնում է բլուրի գագաթնամաս և ունի սակավ թեքություններ դեպի Հրազդանի ձորը ու ԹՈՒՄՈ կենտրոնի այգին: Համալիրի հետիոտն մուտքերը նախագծված են ԹՈՒՄՈ կենտրոնի շենքի կողմից ու Հալաբյան փողոցից:

Մեքենաների մուտքը նախատեսված է հողատարածքի հյուսիս-արևմտյան հատվածից՝ Հալաբյան փողոցից: Համալիրի հիմնական զուգահեռանիստաձև ծավալը ձգված է հյուսիսից դեպի հարավ: Գլխավոր մուտքը կազմակերպված է կենտրոնական մասից ԹՈՒՄՈ կենտրոնի հիմնական տարածքը նախագծվող շենքի առաջին հարկը միացնող կամրջով:

Հողատարածքի հարևանությամբ գտնվում են «ԹՈՒՄՈ» համալիրը և կառուցապատումից ազատ տարածքներ, հասարակական և բնակելի շինություններ, մասնավորապես՝

- Հասարակական շենք՝ 92մ նախատեսվող շենքից
- Բնակելի շենք /Հալաբյան փողոց/՝ 218մ հողամասի սահմանից
- Թումո ստեղծարար տեխնալոգիաների կենտրոնի շենք՝ 58 մ նախատեսվող շենքից
- Զրատար առու՝ 27մ հողամասի սահմանից
- Հրազդան գետ՝ 119 մ հողամասի սահմանից
- Հալաբյան փողոց՝ 190 մ նախատեսվող շենքից
- Գոյություն ունեցող ցանկապատ՝ 7-10 մ հողամասի սահմանից

Հասարակական շինությունից հեռավորությունը նորմավորվում է ՀՀՇՆ21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմում: Նորմի Աղյուսակ 8-ում տրված են շենքերի միջև հեռավորությունը ըստ շենքերի հրակայունության աստիճանի: Նախագծվող շենքի հրակայունության աստիճանը նախատեսվում է 1-ին կարգի, մոտակա շենքը Թումո ստեղծարար տեխնալոգիաների կենտրոնի շենքն է որը նույնպես 1-ին

հրակայունության աստիճանի է: Ըստ նորմի պահանջի 1-ին հրակայունության աստիճանի շենքերի միջև նվազագույն հեռավորությունը 6մ է: Նախագծվող շենքը Թումո ստեղծարար տեխնալոգիաների կենտրոնի շենքից նախատեսվում է կառուցել 58մ հեռավորության վրա: Նույն պահանջը կա նաև ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի աղյուսակ 44-ում:

Ռեկեֆային անկումով հողամաս է, երկրաբանական տեսակետից բարենպաստ է կառուցապատման համար:

Հայցվող տարածքում ծառաթփային բուսականություն չկա, ծառահատում չի նախատեսվում:

Հողամասը ծանրաբեռնված է 188քմ պահեստային տարածքով, որը նախատեսվում է ապամոնտաժել, իսկ 280մ³ ծավալով առաջացած շինարարական ախբը տեղափոխել համայնքի կողմից հատկացված վայր:

Հողի բերրի շերտ համաձայն ինժեներա-երկրաբանական ուսումնասիրությունների բացակայում է:

1.5.2 Նախատեսվող գործունեության բնութագիր

ՀՀ, Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջան, Հալաբյան 16/2 հասցեում նախատեսվող ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի կառուցման նախագիծը իրականացվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման 20.01.2022թ. N 14042022-01-0294 վկայականի և Երևանի քաղաքապետի կողմից 05.08.2022թ. տրված N 01/18-07/2-50/22514-711 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Սույն նախագծով նախատեսվում է 15000 քմ հողամասի սահմաններում կառուցել 3346 քմ կառուցապատման մակերեսով և մոտ 17000քմ ընդհանուր մակերեսով ինժեներական և կիրառական գիտությունների համալիր:

Ինժեներական և կիրառական գիտությունների համալիրը կլինի բազմաֆունկցիոնալ շենք, որը կմիավորի ակադեմիան և արդյունաբերությունը՝ կապելով ուսանողներին, հետազոտողներին և տեխնոլոգներին, միմյանց և իրենց համաշխարհային գործընկերների հետ և նպաստելով նորարարության և ձեռներեցության զարգացմանը: Նախագիծը ԹՈՒՄՈՍ Ստեղծարար Տեխնոլոգիաների Կենտրոնի ընդլայնումն է:

ԾԱՎԱԼԱՏԱՐԱԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Նախագծվող շենքը իրենից ներկայացնում է ուղղանկյուն զուգահեռանիստ 114x23.7 մ առանցքային չափերով և 120x24.88 մ զաբարիտային չափերով՝ կոնսոլային հատվածները ներառյալ: Շենքի ճարտարապետական բարձրությունը 25.03 մ է՝ վերգետնյա առաջին հարկի ճակատի երեսպատման ստորին նիշից մինչև շենքի ամենաբարձր նիշը: Շենքի վերգետնյա ծավալը նստած է 97.3x24.4 մ զաբարիտային և 96x23.7 մ առանցքային չափերով նկուղային հարկի վրա: Զուգահեռանիստի ծավալի երկու եզրերը կազմում են կոնսոլներ՝ հարավային կողմում՝ 16,15 մ, հյուսիսային կողմում 8,65 մ երկարությամբ: Ընդունված լուծումը մի կողմից ստեղծում է շենքի թեթևության տպավորություն, մյուս կողմից՝ նվազեցնում է կառուցապատման մակերեսը ու առավելագույնս մեծացնում է հողամասի բարեկարգման մակերեսը:

Շենքի ծավալը կազմված է երկաթբետոնե կմախքից 6 մ երկայնական ու 8. 2 մ, 7. 3 մ, 8. 2 մ լայնական թռիչքներով: Ծավալը սեյսմիկ կարերով բաժանված է երեք մասի:

Շենքն ունի մեկ ստորգետնյա, հինգ վերգետնյա հարկ և վեցերորդ տեխնիկական հարկ տանիքում: Վերգետնյա 1-ից 5-րդ հարկերի բարձրությունը հատակից հատակ կազմում է 3.9 մ, ստորգետնյա հարկի բարձրությունը՝ 5.0-5.6 մ: Նկուղային հարկում ավտոկայանատեղի է՝ համատեղված պարզագույն թաքստոցի գործառույթի հետ, սպասարկման և տեխնիկական սենքեր՝ այդ թվում օդափոխության խցեր, պոմպակայան, ջրի ռեզերվուարներ, հիմնական էլեկտրավահանակային սենյակը, թափոնի պահեստավորման սենյակը, ծառայողական սենյակներ, սանհանգույցներ և ցնցուղարաններ, անվտանգության սենյակը, պահեստներ և այլ օժանդակ տարածքներ: Նկուղում նախատեսված է նաև գրասենյակային տարածք՝ կապված առաջին հարկի հետ բաց աստիճանավանդակով: Ավտոկայանատեղին նախագծված է ընդհանուր 14 ավտոմեքենայի համար, որոնցից 12 տեղը՝ 2. 5x5.5 մ չափերով

(երկու տեղը կախյալ տեսակի), և 2 տեղը՝ 3.6x6 մ չափերով՝ նախատեսված մարդկանց սակավաշարժուն խմբերի համար:

Առաջին հարկում նախատեսված են մանրածախ առևտրի սրահներ, գրասենյակներ, սրճարաններ և բազմալույս կոնֆերենց կենտրոն, որն իր մեջ ընդգրկում է հարավային ատրիումը, երկու բազմաֆունկցիոնալ սենյակ և բաց տերրասա: Երկրորդից հինգերորդ հարկերը նախատեսված են գրասենյակների համար:

Շենքի տանիքը նախատեսված է հարթ, ներքին ջրահեռացումով: Տանիքի վրա՝ 6-րդ տեխնիկական հարկում է գտնվում բնական գազով աշխատող կաթսայատունը, 2 էլեկտրական սենյակ և 2 էլք աստիճանավանդակներից: Տանիքի վրա մնացյալ ինժեներական սարքավորումները՝ չիլերների հանգույցը և օդափոխության սարքավորումներ, տեղադրված են բաց:

Վթարային գեներատորները գտնվում են շենքից դուրս:

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐԱՆՔ

Համալիրի ճակատների հիմնական հարդարանքի նյութ են ծառայում լուսաթափանց պոլիկարբոնատե սալերը: Երեսապատման սալերը ունեն նաև ջերմամեկուսիչ ու ձայնամեկուսիչ հատկություններ ու լիովին ապահովում են շենքի արտաքին ջերմամեկուսացման պահանջները:

Շենքի կողային ճակատները հարդարված են ճակատային ապակեպատումով: Ներքին հարդարանքն ընդունված է ելնելով ֆունկցիոնալ և շահագործման պահանջներից՝ բարձրորակ նյութերի կիրառմամբ:

Վարձակալվող տարածքների պատերը և միջնորմները հիմնականում նախատեսված են գիպսաստվարաթղթե, մետաղական ստադերից կմախքով, ջերմամեկուսիչ կամ ձայնամեկուսիչ շերտերով: Կոմերցիոն տարածքների որոշ հատվածներ, որոնք ուղղված են դեպի հանրային տարածքներ, ինչպիսիք են՝ ատրիումները (հարավային, կենտրոնական և հյուսիսային) և առաջին հարկի միջանցքները նախատեսված են այլումինե պրոֆիլներով ապակեպատ վիտրաժներից: Հանրային տարածքների որոշ պատեր նախատեսված են ճարտարապետական բետոնից:

Ընդհանուր աստիճանները հարդարված են միկրոցեմենտով: Նկուղային միջնորմները բետոնե բլոկներից են և հիմնականում ներկված:

Վարձակալման տրվող տարածքները տրվում են վարձակալման առանց հարդարման և առանց տեխնիկայի:

Հիմնական, օժանդակ, սպասարկման և տեխնիկական նշանակության տարածքների ներքին հարդարման լուծումների նկարագրություն.

Նախքան կառույցի շահագործման հանձնելը կատարվում է տեխնիկական, սպասարկման և օժանդակ սենյակների, վարչական և գրասենյակային նշանակության տարածքների, աստիճանավանդակների, վերելակների և մուտքային հանգույցների ներքին հարդարում:

Շենքի բոլոր հարկերում կոմերցիոն նշանակության տարածքները (մանրածախ առևտրի կետեր, սրճարաններ, գրասենյակներ) նախագծով նախատեսվում են առանց ներքին հարդարման.

Հարդարումը իրականացվում է սեփականատիրոջ /վարձակալի կողմից՝ կառույցի շահագործման տրվելուց հետո: Տարածքներում միջնորմների տեղադրումը, հարթեցնող շերտերի իրականացումը, սալիկների կարերի լցումը, սվաղումը, հատակների ջրամեկուսացումը չեն նախատեսվում:

Վարձակալվող բոլոր տարածքների, ներառյալ՝ սրճարանների, մանրածախ առևտրի կետերի, գրասենյակների, ամբողջ հարդարումը, հատակի կոնստրուկցիան (այդ թվում նաև տեխնոլոգիական լուծումները) չեն իրականացվում շինարարության փուլում կառուցապատողի կողմից, այլ իրականացվում են վարձակալի կողմից՝ շենքը շահագործման հանձնելուց հետո՝ համաձայն կառուցապատողի հետ համաձայնեցված փոփոխությունների մասին փաստաթղթերի: Գրասենյակային տարածքները հանձնվում են առանց հատակագծային բաժանումների՝ որպես բաց տարածք:

Հարավային ատրիումում կոնֆերենց դահլիճի և նրան սպասարկող երկու բազմաֆունկցիոնալ սենյակների ավարտական հարդարման և սարքավորումների տեղադրման աշխատանքները կիրականացվեն օպերատորի կողմից շենքը շահագործման հանձնելուց հետո:

ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Համալիրի բոլոր հորիզոնական հաղորդակցման կապերը իրականացվում են միջանցքների, նախասրահների և սրահների միջոցով: Հիմնական միջանցքները տեղակայված են աստիճանավանդակների և վերելակների շուրջը: Ուղղահայաց կապերի համար նախատեսված են աստիճանավանդակներ և վերելակներ: Շենքի սեյսմիկ մասնաբաժիններից եզրայինները ապահովված են մեկական էվակուացիոն աստիճանավանդակներով, կենտրոնական սեյսմիկ մասնաբաժինը՝ երկու էվակուացիոն աստիճանավանդակներով, որոնք տեղակայված են հակահրդեհային և սեյսմիկ նորմերին համապատասխան: Նախատեսված է լրացուցիչ աստիճանավանդակ՝ առաջին և նկուղային հարկերի միջև: Էվակուացիոն աստիճանավանդակները ապահովված են անմիջական ելքով դեպի դուրս նկուղային հարկի մակարդակում:

Էվակուացիոն աստիճանավանդակների դռները հակահրդեհային են և ինքնափակվող: Համալիրում նախատեսված են 6 հասարակական և 2 բեռնատար վերելակներ: Հասարակական վերելակների բեռնատարողությունը նախատեսված է 1000 կգ. , բեռնատար վերելակների բեռնատարողությունը՝ 1600 կգ:

ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նախագծով նախատեսված հակահրդեհային միջոցառումները մշակված են «Մաժդալանի Ինջինիրինգ Էնդ Թրեյդինգ» (Majdalani Engineering and Trading) ընկերության կողմից ու մանրամասնորեն ներկայացված են «Հողեհային Անվտանգություն» նախագծային բաժնի Հրդեհային պաշտպանության եւ անվտանգության տեխնիկայի զեկույցում:

Ստորև հակիրճ ներկայացված են զեկույցի հիմնական դրույթները:

Համաձայն միջազգային նորմերի՝ NFPA 101, շենքը դասվում է ցածրահարկ շենքերի դասին, հաշվի առնելով, որ բարձրությունը հրշեջ մեքենայի հասանելիության ստորին նիշից մարդկանց մշտական ներկայությամբ ամենաբարձր հարկի հատակը 22.7 մ է: Համաձայն International Building Code IBC միջազգային նորմերի աղյուսակ 601-ի, շենքը դասակարգվում

է 1B տիպի: Ելնելով վերոգրյալից՝ ընդունվել են կառուցվածքային տարրերի հետևյալ ստանդարտները. Հիմնական երկաթբետոնե կմախքը նախատեսված է REI 120 դասի հրակայունության: Ներքին ու արտաքին կրող պատերը նախատեսված է REI 120 դասի հրակայունության: Երկաթբետոնե միջհարկային ծածկերը նախատեսված են REI 120 դասի հրակայունության:

Շենքի հաշվարկային տարողությունը ըստ միջազգային նորմերի (IBC) կազմում է 1500 մարդ: Հարկերում մարդկանց քանակը տատանվում է 770–ից առաջին հարկում մինչև 130-160 վերնի մակարդակներում: Ելնելով վերոգրյալ հաշվարկից շենքում նախատեսված են 4 էվակուացիոն ելք յուրաքանչյուր հարկից աստիճանավանդակների միջոցով: Աստիճանաբազուկների լայնքը ընդունված է 1200մմ: Աստիճանավանդակների դռները նախատեսված են հակահրդեհային EI 90 հրակայունության սահմանով և ինքնափակվող: Դռների բացվածքների լայնքը ընդունված է 1200մմ: Վերելակների հորանները նույնպես նախատեսված են EI 60 հրակայունության սահմանով հակահրդեհային դռներով: Բոլոր աստիճանավանդակները ունեն անմիջապես ելք դեպի դուրս նկուղային հարկի մակարդակում:

Էվակուացիոն միջանցքների պատերը համաձայն NFPA պահանջների նախատեսված են REI 60 հրակայունությամբ: Դեպի էվակուացիոն միջանցքներ բացվող դռները նախատեսված են EI 20 հրակայունության դասի: Առավելագույն հեռավորությունը յուրաքանչյուր սենքից մինչև էվակուացիոն ելք չի գերազանցում 61 մ, փակուղիների երկարությունը՝ 15մ, միջանցքների նվազագույն լայնքը՝ 1.8մ: Բոլոր էվակուացիոն ուղիներում նախատեսված են «Ելք» գրագրությամբ լուսային ցուցանակներ՝ միացված վթարային լուսավորության ցանցին:

Շենքում նախատեսված են ավտոմատ հրդեհամարման սպրինկլերային համակարգ, ծխահեռացման ու օդի դիմհարի համակարգեր, հրշեջ պահարաններ ծորակներով ու կրակմարիչներով ըստ հաշվարկի, վթարային լուսավորություն, հրդեհի ազդարարման համակարգ: Շենքին հարևանությամբ Հալաբյան փողոցի վրա գոյություն ունի հրշեջ հիդրանտ:

Համալիրն ունի հրշեջ մեքենաների մոտեցման հնարավորություն Հալաբյան փողոցից՝ հողամասի հյուսիս–արևմտյան հատվածից և ԹՈՒՄՈ կենտրոնի շենքի կողմից: Նախատեսված է օդակաձև ճանապարհ շենքի շուրջ:

Հրդեհաշիջումը նախագծված է համաձայն NFPA 13 և 14-ի, սպրինկլերային համակարգի, հրշեջ ճկափողի խցիկների և խողովակապույների նորմատիվների: Սպրինկլերային համակարգի նախագծումը ամբողջ շենքի համար իրականացված է համաձայն վտանգավորության ցածր դասակարգի, բացառությամբ ավտոկայանատեղի/պարգագույն թաքստոցի, որտեղ ընդունված է վտանգավորության պարզ աստիճան:

Նկուղի հիմնական էլեկտրական սենյակները բարձր և ցածր լարման բաշխման վահանների համար պաշտպանված են չոր քիմիական համակարգի օգտագործումով գործող հակադրեհային ավտոմատ համակարգով:

Վարձակալվող գրասենյակային տարածքներում ցողացիների տեղադրումը կիրականացվի վարձակալի կողմից՝ շահագործման հանձնման ժամանակ:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱԿԱՎԱՇԱՐԺՈՒՆ ԽՄԲԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նախագծով նախատեսված են բնակչության սակավաշարժուն խմբերի շենքի ներսում տեղափոխման անարգելիությունը ապահովելու բոլոր ահնարաժեշտ միջոցառումները: Վերելակները համապատասխանում են հաշմանդամներին տեղափոխման ներկայացվող պահանջներին: Բոլոր հասարակական ու սպասարկման սենքերը, հարմարեցված են սայլակով շարժվող հաշմանդամների սպասարկման համար: Նախատեսված են համապատասխան սանհանգույցներ: Միջանցքների, սենյակների դռների գաբարիտները, լայնքը համապատասխանում են հաշմանդամների անարգել ինքնուրույն տեղափոխվելու պահանջներին:

Նկուղային, առաջինից հինգերորդ հարկերում նախատեսված են հաշմանդամի պատսպարաններ՝ երկու հատ յուրաքանչյուր հարկում 4-5/B-C և 18-19/B-C առանցքներով պարփակված հատվածներում: Լրացուցիչ, առաջին հարկում 11-12/A առանցքներում նախատեսված է անմիջական ելք դեպի արտաքին դիտահարթակ/կամուրջ՝ սակավաշարժուն խմբերի հասանելիությամբ:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման նպատակով -5.000 նկուղային հարկում նախատեսված է երկակի գործառնական նշանակության սենք: Նշված սենքը խաղաղ պայմաններում կծառայի որպես ավտոկայանատեղի, իսկ արտակարգ իրավիճակների դեպքում՝ որպես պարզագույն թաքստոց: Նախագծվող թաքստոցը արտակարգ իրավիճակների պայմաններում նախատեսված է միջին հաշվարկով 1500 մարդու համար:

Դեպի թաքստոց ուղղորդումը կազմակերպվում է լուսային ցուցանակների (ՍՈՒՏՔ, ԵԼՔ): Նախատեսված է վթարային լուսավորություն, օդափոխության, ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգեր: Թաքստոցի տարածքում նախատեսված են սանհանգույցներ արտակարգ իրավիճակներում պատսպարված մարդկանց համար, այդ թվում նաև սակավաշարժուն մարդկանց համար:

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Որպես 0.000 նիշ ընդունված է առաջին հարկի հարդարված հատակի նիշը, որը համապատասխանում է 1045.38 բացարձակ նիշին:

Հողատարածքի մակերեսը՝ 15000 քմ

Կառուցապատման մակերեսը՝ 3220 քմ /21.47%/

Ընդհանուր կանաչապատման մակերեսը՝ 8978 քմ

- Կանաչապատում կոնսոլների տակ՝ մինչև 4.5մ բարձրությամբ մասերում և գետնախորշերի վրա՝ 700քմ
- Կանաչապատում՝ 8278քմ /55.19%/

Ճանապարհներ և սալվածքներ՝ 3502 քմ /23.34%/

Շենքի ընդհանուր մակերեսը՝ 13494.6 քմ

Շենքի շահագործման մակերես՝ 12268.7 քմ

Շենքի շինարարական ծավալը՝ 86910 քմ

Այդ թվում վերգետնյա ծավալը՝ 75337 քմ

Նախագծով նախատեսվում է նաև իրականացնել կանաչապատում կոնսոլների տակ՝ մինչև 4.5մ բարձրությամբ մասերում և գետնախորշերի վրա:

Հարկայնությունը՝ 1 ստորգետնյա հարկ, 5 վերգետնյա հարկեր և 1 տեխնիկական հարկ տանիքում:

Շենքի ճարտարապետական բարձրությունը հաշված արտաքին ճակատի վերգետնյա առաջին հարկի երեսպատման ստորին նիշից մինչև շենքի ամենաբարձր նիշը՝ 25.03 մ

Շենքի հրդեհատեխնիկական բարձրությունը հրշեջ մեքենայի հասանելիության ստորին նիշից մարդկանց մշտական ներկայությամբ ամենաբարձր հարկի հատակը՝ 22.7 մ

Ավտոկայանատեղերի քանակը՝ 14

Մարդկանց առավելագույն քանակը՝ 1500 մարդ

Նախագիծը մշակված է համաձայն՝

ՀՀՇՆ 30-01-2014 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

ՀՀՇՆ 21-01-2014 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 102-Ն ՀՐԱՄԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021Թ. ՄԱՐՏԻ 31 ԹԻՎ 372-Ն ՀՐԱՄԱՆ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

1.5.3 Իրավիճակային հատակագիծ





1.5.4 Ժամանակացույց

ՀՀ Ք.ԵՐԵՎԱՆԻ TUMO ԿՐԵԱՏԻՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ 011 EUSC ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ																																						
Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց																																						
ՀՀ	Խումբ	Աշխատանքների անվանումները	Չ.մ.	Ծավալը	Հիմնավորումը	Աշխատատար նյութեր		Ներքին փոխադրման թիվը	Բանվորների թիվը	Տնարկությունը, օր	I ՏԱՐԻ												II ՏԱՐԻ												III ՏԱՐԻ			
						Նորմ ան, մ-ժամ	Ընդ- մաքդ- հերթ				ամիսներ																											
											1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28
	2	3	4	5	6	7	8	9	10	11	12																											
1	Ա	Նախապատրաստական աշխատանքներ					720	1	12	60	12																											
		Տարածքի մասնակի ժամանակավոր ցանկապատում, գոյություն ունեցող շինությունների քանդում, գրանտի առկա լցակայանների հեռացում, մատուցային ճանապարհների հարթեցում, ժամանակավոր կոմունիկացիաների տեղադրում, գոյություն ունեցողների հեռացում կամ վերանորոգում, շինարարական մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինարարական, վարչատնտեսական և սանիտարանիզիելի տարածքների կարգավորում																																				
	Բ	Հիմքերի իրականացում																																				
2		Փոստակի իրականացում հիմնային սալի համար	մ ³	7500.0																																		
3		Հիմնային սալի իրականացում	մ ³	5512.0	06-01-001-18	2.6	1770.73		10	60				10																								
4		Ջրամեկուսացման աշխատանքներ և ներքին հետվիցք					100.00																															
	Գ	Ստորգետնյա երկաթբետոնե կոնստրուկցիաներ																																				
5		Երկաթբետոնե սյուների իրականացում	մ ³	389.03	06-01-026-6	8.38	407.51																															
6		Երկաթբետոնե հեծանների իրականացում	մ ³	489.9	06-01-109-1	16.87	1033.08																															
7		Երկաթբետոնե ծածկի իրականացում	մ ²	50.84	06-01-110-1	8.67	55.1	1.5	20	120				20																								
8		Երկաթբետոնե պատերի իրականացում	մ ²	1128.4	06-01-108-2	9.9	1396.4																															
9		Երկաթբետոնե աստիճանների իրականացում	մ ³	34.0	06-01-111-1	24.73	105.1																															
10		Այլ երկաթբետոնե աշխատանքներ					50.00																															
	Դ	Վերգետնյա երկաթբետոնե կոնստրուկցիաներ																																				
11		Երկաթբետոնե սյուների իրականացում	մ ³	440.00	06-01-026-6	8.38	460.90																															
12		Երկաթբետոնե հեծանների իրականացում	մ ³	1858.9	06-01-109-1	16.87	3919.91																															
13		Երկաթբետոնե ծածկի իրականացում	մ ²	3305.63	06-01-110-1	8.67	3582.5	1.5	20	420				20																								
14		Երկաթբետոնե պատերի իրականացում	մ ²	1477.0	06-01-108-2	9.9	1827.7																															
15		Երկաթբետոնե աստիճանների իրականացում	մ ³	38.1	06-01-111-1	24.73	117.8																															
16		Այլ երկաթբետոնե աշխատանքներ					100.00																															
	Ե	Շարվածք, տանիքային աշխատանքներ, բացվածքների լրացում, ներքին, արտաքին հարդարում																																				
17		Շարվածքի իրականացում					540.0		6	90															6													
18		Տանիքային աշխատանքներ					360.0		6	60																												
19		Բացվածքների լրացում, հատակներ, ներքին և արտաքին հարդարում					6600.0		20	330																												
20	Զ	Տեխնիկական նշանակության շինության կառուցում					480.0		8	60																												
21	Է	Բնմեներական ցանցեր					1080.0		6	180																												
22	Ը	Բարեկարգում և կանաչապատում					1800.0		10	180																												
		Ընդհանուր					26507			1560																												

ՆԱԽԱՐԱՀ ՏՈՒՄ	ՆԱԽԱՐԱՀ ԵՐԱԿ	ԲԱՐՈՋԱՐԱՆ ՔԱՐԵՐԱԿ
ՆԱԽԱՐԱՀ ՆԱԽԱՐԱՀ ՆԱԽԱՐԱՀ		
ԵՄ ՓՈՐՈՐԻ ՖԻՆԱՆՍԱՅԻՆ ԵՎ ԿՐԹԱՄԱՍՆԻ ՓԻՆԱՆՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ԵՄ EURO CONVERGENCE CENTER for Engineering and Applied Science		
ՆԱԽԱՐԱՀ ՆԱԽԱՐԱՀ ՆԱԽԱՐԱՀ		
ԸՆԴ.1 ՇԻՆԱՐԱՅՈՒԹՅԱՆ ԿՐԱՆՆԵՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՀՈՐԸ ԸՆԴ.1 ՇԻՆԱՐԱՅՈՒԹՅԱՆ ԿՐԱՆՆԵՐԱԿԱՆ		
ՆԱԽԱՐԱՀ ՆԱԽԱՐԱՀ	ՆԱԽԱՐԱՀ ՆԱԽԱՐԱՀ	ՆԱԽԱՐԱՀ ՆԱԽԱՐԱՀ
ՆԱԽԱՐԱՀ ՆԱԽԱՐԱՀ	22	22
ՆԱԽԱՐԱՀ ՆԱԽԱՐԱՀ	5	5
ՆԱԽԱՐԱՀ ՆԱԽԱՐԱՀ ՆԱԽԱՐԱՀ		
011		
011-EUCC-00-PP-22		
CMC-009		

2. ԻՆՏԵՆՏԻՎԱԿԱՆ ՄԱՍ

2.1 Ջեռուցման ու օդափոխության համակարգեր

2.1.1 Ջերմամատակարարման աղբյուրները, ջեռուցման և օդափոխության համակարգում ջերմային կրիչների պարամետրերը

Ինժեներական և կիրառական գիտությունների համալիրում նախատեսված են մեխանիկական համակարգեր, որոնք նախագծված են հարմարավետություն ապահովելու համար՝ էներգաարդյունավետության և սպասարկելիության պայմանների պահպանմամբ: Համակարգերը նախագծվելու են այնպես, որ ծրագրի ընթացքում ապահովվի համապատասխան ճկունությունը, քանի որ վերջինիս գործառույթները զարգանալու են ժամանակի ընթացքում:

Հաշվի են առնվելու հետևյալ գործոնները՝

- Էներգիայի սպառման համակարգերի կյանքի ցիկլում՝ ծախսերի օպտիմալացում,
- Համակարգի ինտեգրում և սպասարկելիություն,
- Շրջակա միջավայրի վրա ազդեցությանը և ջերմոցային գազերի արտանետման մաքսիմալ նվազեցում:

Ինժեներական և կիրառական գիտությունների համալիրը բազմաֆունկցիոնալ կենտրոն է՝ իր տարբեր գործառույթներով և օգտագործման գործակիցներով: Դրանից ելնելով, օդափոխության և օդորակման համակարգի վրա տարբեր բեռներ ունեցող տարբեր սենյակները տարբեր մոտեցում են պահանջում:

Համաձայն զեկույցի ԱՏԲՈՒՄՆԵՐԸ սահմանվում են, որպես շենքի արտաքին կեղևի և գրասենյակների միջև առաջին հարկից մինչև տանիք բարձրացող տարածություններն ու ծավալները: Ջեռուցման և հովացման բեռնվածքը տվյալ ծավալներում կորոշվի հաստատված տարածքներից և գրասենյակներից տարբեր:

Ամառվա ներքին թույլատրելի առավելագույն ջերմաստիճանը կկազմի 27 C, իսկ ձմեռը՝ 17 C: Նվազագույն արտաքին օդափոխության մակարդակը ընդունված է ըստ ASHRAE 62.1-ի՝ 10-15 cfm յուրաքանչյուրին՝ ընդհանուր 2000 անձից: Օդափոխության համակարգը ունի բավարար ճկնություն մեծացնելու իր ծավալները շենքի տարողունակության ավելացման պարագայում՝ մինչև 2500 անձ: Առաջարկվող համակարգը իր մեջ ներառում է մի քանի օդի ներածման-արտածման սարքեր (AHU)՝ տեղադրված տանիքին: Այդ AHU-ներից մի քանիսը նախատեսված են շենքի երեք ատրիումների հովացման և ջեռուցման համար: Այդ սարքավորումները օգտագործելու են թարմ օդը, որպես առաջնային աղբյուր ամառը հովացման համար և ձմեռը, երբ արևային բեռնվածքը գերազանցում է պահանջված չափը: Արտաքին օդի և հետադարձ օդի փականները գործելու են որպես կարգավորիչներ պահպանելու սահմանվախ ջերմաստիճանն ու խոնավության մակարդակը:

Ցանկացած ավելացող հովացման և ջեռուցման պահանջները, որոնք չեն կարող հասանելի լինել փականների մոդուլյացիայի շնորհիվ կակտիվացնեն մեխանիկական հովացման և/կամ ջեռուցման համակարգերը: Սառը ջուրը ամառը և տաք ջուրը ձմեռը կբաշխվեն տարբեր AHU-ներին տանիքի վրա գտնվող չիլլերներից և կաթսայատնից: Տանիքի վրա երկու AHU նախատեսված են ամբողջ հարկերի գրասենյակային տարածքների թարմ

օդի համար: Այդ միավորները հազեցած են ջերմության վերականգնման ջերմափոխադրիչներով՝ բարելավելու էներգիայի օգտագործումը: Նրանք կվերականգնեն շենքի արտածման համակարգից ջերմությունը և կօգտագործեն այն թարմօդի նախասառեցման և նախաջեռուցման համար: Մի քանի արդյունավետ կետերում կտեղադրվեն ածխածնի դիօքսիդի տվիչներ CO₂ մակարդակը վերահսկելու համար: Երբ երկար շրջանի ընթացքում արձանագրվում է նորմայից բարձր մակարդակ, օդափոխման և ջերմամատակարարման համակարգը (HVAC) ավտոմատ կերպով անցնում է արտակարգ ռեժիմի: Այլ համակարգեր նույնպես կգործարկվեն՝ լրացուցիչ էներգիա տրամադրելու համար ներմուծված մաքուր օդի մշակումն ապահովելու նպատակով՝ CO₂-ի մակարդակը նվազեցնելու համար: Ինչպես նաև, յուրաքանչյուր AHU միավորի արտանետման օդատարի վրա կտեղադրվեն ախտահանման UV-C համակարգեր: Ուլտրամանուշակագույն էներգիան վնասագերծում է վտանգավոր բակտերիալ և սնկային օրգանիզմները: Շենքի գիշերային օդափոխության, հովացման և ջեռուցման ներդրումը BMS համակարգի միջոցով կնպաստի շենքի ծավալի նախահովացմանը: Այդ միջոցառումը կնպաստի օգտագործման ցածր մակարդակ և բարելավված սարքավորումների աշխատանք: Հյուսիսային և հարավային կողմի ատրիումների ջեռուցումը կլրացվի ցածր ջերմաստիճանի հատակային ջեռուցմամբ: Ավելորդ ներածված թարմ օդը շենքից դուրս կհանվի բարոմետրիկ փականներով ցածր մակարդակների վրա՝ պահպանելով օդի ճնշման անհրաժեշտ մակարդակը տարածքում:

ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐ ԵՎ ԴԱՍԱՍԵՆՅԱԿՆԵՐ

Շենքում նախատեսված տարբեր գործառնություններով սենյակները ունենալու են օդորակում և ջեռուցում՝ օգտագործելով չորս և/կամ երկու խողովակով ֆանքոյլներ և փոքր օդի ներածման-արտածման սարքեր: Դրսից վերցրած և մշակված թարմ օդը յուրաքանչյուր սենյակ մղվելու է օդատարների միջոցով: Յուրաքանչյուր սենյակում թարմ օդի քանակը որոշվելու է սենյակի տարողունակությունից և ըստ ASHRAE 62.1 ստանդարտի: Օգտագործվող սառը և տաք ջրի քանակը հաշվարկվելու է առանձին յուրաքանչյուր վարձակալի համար՝ շենքի BMS համակարգի միջոցով:

ԽՈՇԱՆՈՑՆԵՐ ՎԵՐԻՆ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՍՐՃԱՐԱՆՆԵՐ

Շենքի ցանկացած կետում խոհանոցներ նախատեսելու դժվարությունից ելնելով, երկու հիմնական խոհանոցի օդաքարշի խողովակայություններ են տեղադրված շենքի երկու ծայրերում, որոնք հնարավորություն կտան փոքր օդաքարշերով փոքրածավալ խոհանոցների շահագործման: Խոհանոցներում կօգտագործվեն ցածր

ջերմատվությամբ սարքավորումներ: Մեծ կոմերցիոն տեսակի խոհանոցների իրականացումը չի թույլատրվում: Խոհանոցի օդաքարշի համակարգի փոխհատուցող օդը պետք է հանդիսանա շենքի տարածքներին ներածվող թարմ օդի մաս:

ՍԵՐՎԵՐԻ ՍԵՆՅԱԿՆԵՐ

Սերվերային սենյակների հովացման և օդափոխության համակարգերը տեղադրված են լինելու վարձակալների տարածքում: Եթե անհրաժեշտ կլինեն հովացման ճշգրիտ մակարդակ, ապա հովացման ջուր կմատակարարվի շենքի ենթակառուցվածքներից և նրա օգտագործված ծավալները կհաշվարկվեն առանձին:

ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻ / ՊԱՐԶԱԳՈՒՅՆ ԹԱՔՍՈՑ ՆԿՈՒՂՈՒՄ:

ASHRAE-ի ստանդարտներով, CO մոնիթորինգով պարբերական օդափոխության համակարգը պետք է ապահովի 0.05 cfm/ftI թարմ օդ, երբ աղտոտվածության մակարդակը ցածր է, և ըստ անհրաժեշտության բարձրացնի մինչև 1 cfm / ft2 (11cfm/m2), երբ CO կամ NO₂ մակարդակները աճեն: Եթե ջերմաստիճանը նվազում է 12 Co-ից ցածր, ջեռուցման համակարգը ակտիվանում է ավտոկայանատեղի / պարզագույն թաքստոցի ջերմաստիճանը հասցնելով մինչև 17 Co: Ավտոկայանատեղի թարմ օդի և ջեռուցման պահանջվող քանակը գերազանցում է պարզագույն թաքստոցի պահանջարկը: Ավտոկայանատեղի/պարզագույն թաքստոցի օդափոխությունն և ջեռուցումը կիրականացվի միայն ջեռուցող օդի ներածման-արտածման սարքերով (AHU)՝ պահանջարկի կառավարման համակարգով: Արտածվող օդը դուրս կհանվի հողի մակարդակի մոտ: Իսկ օդի ներառումը կկատարվի հողից առնվազն 3 մ բարձրության վրա և 10 մ հեռու արտածման ելքերից:

ՀԱՆՐԱՅԻՆ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ ԵՎ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՍԵՆՅԱԿՆԵՐ:

Բոլոր հանրային սանհանգույցներից օդի արտածումը նախատեսված է տանիքից օգտագործելով տանիքի վրա տեղադրված ընդհանուր օդափոխիչներ: Սանհանգույցների արտածման մակարդակը նախատեսված է 2cfm/ft2 կամ 50cfm ամեն միավորի համար:

ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՐԹԱԿ:

Սառնարանային սարքավորումների հարթակը բաղկացած է երեք օդով սառեցվող ինվերտորային պտուտակավոր չիլլերներից, որոնցից երկուսը հազեցած են ջերմության վերականգնման կոնդենսերներով՝ ձմեռային և միջանկյալ սեզոններին բնական սառեցում ապահովելու համար: Չիլլերները տեղադրված են

տանիքում: Բնական սառեցումով անհրաժեշտ ծավալները չապահովելու դեպքում, ակտիվանում են էլեկտրական կոմպրեսորները: Սառը ջրի մղման համակարգերը կօգտագործեն առաջնային / փոփոխական արագության երկրորդական համակարգերը՝ բեռնվածքների համապատասխանեցման և մղման էներգիայի

խնայողության համար: Սառնարանային սարքավորումների հարթակի համար կիրառվելու է էթիլեն գլիկոլի լուծումը տանիքի վրա՝ սառեցումը և ջենքի ներսում ջրի սառեցումը կանխարգելելու համար:

ՋԵՌՈՒՑՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՐԹԱԿ:

Ջեռուցման սարքավորումների հարթակը բաղկացած է երեք ուլտրաբարձր արդյունավետությամբ բնական գազով աշխատող կաթսաներից՝ հազեցած մոդուլացվող երկվառելիք այրիչներով (բնական բազ և հեղուկ վառելիք) և ծխագազային էներգախնայող սարքով: Կաթսաները նախատեսված են 8 բար ճնշման համար և

տեղադրված են տանիքում: Գոտիների ջեռուցման պոմպերը կբաշխեն տաք ջուրը տարբեր աշխատանքային ջերմաստիճաններով (օրինակ՝ հատակային ջեռուցման համակարգերին (եթե պահանջվում է) կմատակարարվի ցածր ջերմաստիճանով, իսկ AHU-ների համար բարձր ջերմաստիճանով):

2.2 Աղմուկից և վիբրացիայից պաշտպանության միջոցառումներ

Նախագծում նախատեսված են օդամշակման սարքերի, օդամուղների և ջեռուցիչ սարքերի վիբրացիայի և աղմուկի դեմ միջոցառումներ:

Ջեռուցման և օդափոխության համակարգերը նախագծվել են հաշվի առնելով ՇՆ 51.13330.2011 «Աղմուկի պաշտպանություն» նորմատիվային փաստաթղթի պահանջները: Ջեռուցման համակարգի խողովակաշարերի ամրացումները և կախիչները նախատեսված են ռետինե ներդիրներով: Օդափոխության համակարգերում նախատեսված են աղմուկախլացուցիչներ, ներքաշող սարքավորումների համար ճկուն միացումներ, որոնք ապահովում են սպասարկվող սենքերում նորմավորված աղմուկի չափը: Օդամշակման սարքավորումները առաստաղից կախվում են հակավիբրացիոն ոտիկներ միջոցով: Սարքերի արտաքին կորպուսները նախատեսված են ցածր աղմուկով և մեկուսացված տեսակի:

2.3 Ավտոմատացում և կառավարում

Ջեռուցման և օդափոխության համակարգերը համալրված են ավտոմատ կարգավորման հեռավար կառավարման և վերահսկողության համակարգերով, որոնք ապահովում են սարքավորման աշխատանքը առանց սպասարկող անձնակազմի մշտական ներկայության:

Նախագծով օդափոխության համակարգերի ավտոմատացման համար կիրառվել են.

- Արտաքին օդի ջերմաստիճանի վերահսկողության և համակարգի աշխատանքային ռեժիմի ավտոմատ փոփոխման սարքեր (ամառ-ձմեռ).
- Հրդեհի ժամանակ ընդհանուր փոխանակային օդափոխության անջատման համակարգեր.
- Օդամուղի օդային փականի արգելափական համակարգեր.
- Ներածման-արտածման օդամշակման սարքերի արգելափական համակարգեր.
- Համակարգի վիճակի վերահսկողության (միացում/անջատում/վթարային) և ռեգերվի անցման համակարգեր.
- Օդի ֆիլտրերի աղտոտվածության մակարդակի վերահսկման համակարգեր.
- Օդամուղների աշխատանքի հաճախության կարգավորում, եթե առկա է հաճախային կարգավորիչ.
- Ավտոկայանատեղիում նախատեսված արտածման և ծխահեռացման համակցված համակարգը՝ արտածման ռեժիմում միանալու հրահանգ է ստանում CO₂-ի ցուցիչներից
- Ներածման-արտածման համակարգերը աշխատում են ռեցերկուլացիայի ռեժիմում, եթե առկա է խառնիչ փական:

2.4 Էներգախնայողության միջոցառումներ

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները

- Օդատաքացուցիչների և օդասառեցուցիչների հզորության ավտոմատ կարգավորում .
- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում.
- Բարձր թերմիկ դիմադրությամբ և արևաթափանցելիության փոքր տոկոս ունեցող պատուհաններ
- Օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով.

- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Օդորակման բարձր արդյունավետության համակարգի կիրառում
- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում
- Տաք ջրի պատրաստման համար նախատեսված արևային ճնշումային ջրատաքացուցիչների կիրառում

2.5 Ջրամատակարարման, Ջրահեռացման ու Հրդեհամարման Համակարգեր

2.5.1 Կենցաղային սառը և տաք ջրերի համակարգ

Ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի ջրամատակարարումը համաձայն Վեոլիա Ջուր ԲԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանների / կցված է հավելվածների բաժնում / հնարավոր է իրականացնել Հալաբյան փողոցով անցնող D=225մմ ջրագծից, իսկ կոյուղու միացումը՝ Հալաբյան փողոցով անցնող D=1200մմ կոյուղատարին:

Նկուղային հարկում նախատեսված է հատուկ ջրի ռեզերվուար, որից կենցաղային ջուրը մատակարարվելու է տարբեր լվացարանների, սահնագույցների, փոքր խոհանոցների սպասարկման համար: Ռեզերվուարի ծավալը հաշվարկված է երկու օրվա համար բավարար ջրի պաշարներ ապահովելու տարողությամբ:

Տարողությունը բաժանված է երկու ջրի ռեզերվուարի միջև՝ շահագործման ճկունության և փոխլրացման համար: Ջրամատակարարման քաղաքային գիծը անցնելու է նկուղային հարկի առաստաղի մակարդակով և մատակարարելու է ջրի ռեզերվուարները: Քաղաքային ջրագծի համար նախատեսված է լողակային փական, որը փակվում է ջրի ռեզերվուարի լցվելու պարագայում, իսկ լողակային փականի չգործելու դեպքում ջուրը կհեռացվի դեպի կոյուղու համակարգ՝ արտահոսման խողովակների միջոցով: Նախատեսված է հատուկ քաղաքային ջրագիծ, որը կծառայի վերգետնյա հարկերում տեղադրված ցայտադրյուններին: Կենցաղային ջրի մղման պոմպերի կառվարման համակարգը կարգավորելու է հոսքի չափը՝ կախված ջրի պահանջարկից: Կառավարումը հիմնված է մղիչ պոմպի արտահոսման խողովակի վրա տեղադրված համակարգի ճնշման սովիչի վրա: Տիպային հարկերում տեղադրված են երկու առանձին էլեկտրական ջրատաքացուցիչներ, որոնք տաք ջուր են մատակարարելու լվացարաններին: Ջրատաքացուցիչները հորիզոնական և ուղղաձիգ տեսակի և տեղադրված են մաքրության սենյակներում: Տաք ջուրը նկուղային հարկում կստացվի էլեկտրական ջրատաքացուցիչներով: Նպատակն է նվազեցնել և/կամ բացառել տաք ջրի խողովակաշարերը և պահուստավորման տարողությունը՝ մանրէաբանական աղտոտվածության վտանգը նվազեցնելու համար:

Նկուղի և տանիքի տարբեր հատվածներում նախատեսված են ճկախողովակի միացման ծորակներ՝ ընդհանուր շահագործման և մաքրման նպատակներով (տանիքում՝ ցրտադիմացկուն տիպի):

2.5.2 Կոյուղու և օդափոխման համակարգ

Սանհանգույցների կոյուղու և օդափոխության խողովակների չափերը և մոնտաժման եղանակը պետք է իրականացվի համաձայն International Plumbing Code-ի և համաձայն կցված խողովակասյուների դիագրամի: Բոլոր կոյուղու խողովակասյուները իջնում են նկուղում տեղադրված երկու հիմնական օդափոխվող կոյուղու փոստրակների մեջ, այնուհետև այդտեղից կոյուղաջրերը պոմպերի միջոցով մղվում են քաղաքային հիմնական կոյուղագծին, որը նկուղի նիշից բարձր է մոտավորապես 12 մ: Կոյուղու փոստրակները գտնվում են հատուկ օդափոխվող սենյակներում: Յուրաքանչյուր հիմնական փոստրակում տեղադրված են երկու ընկղմված պոմպեր՝ իրար փոխարինող, փոխլրացնող, որոնք հագեցած են գործարանային կառավարման վահաններով: Հիմքի մեջ փոստրակների խորությունը և լայնությունը պետք է համաձայնեցվի կոնստրուկտորի հետ: Շենքից դուրս կոյուղագծի ճանապարհը կտրամադրվի արտաքին ցանցերը նախագծող ինժեների կողմից և կորոշվի նախագծման հաջորդ փուլում:

Նկուղի սանհանգույցների կոյուղագծերը կուղղվեն դեպի երկու հիմնական փոստրակներից մեկը: Հիմնային սալի մեջ տեղադրված կոյուղագծերի խրամուղիները պետք է համաձայնեցվեն կոնստրուկտորի հետ:

Ավտոկայանատեղիի գերբեռնված հատակի հոսակները նախատեսված են հավաքելու ավտոկայանատեղիի կեղտաջրերը: Այդ կեղտաջրերը հավաքող խողովակները հիմնային սալի մեջ գտնվող խրամուղիների միջով միանում են փոստրակներին, որտեղից պոմպերի միջոցով կեղտաջրերը մղվում են դեպի շենքի հիմնական փոստրակներ: Այլ կոյուղու խրամուղիներ նախատեսված են տեխնիկական սենյակներում՝ ըստ պահանջի:

2.5.3 Հեղեղատար համակարգ

Անձրևաջրերի խողովակները հավաքելով տանիքի ջրերը կիջեցնեն դրանք նկուղի առաստաղի տակ, որտեղից էլ կուղղեն շենքից դուրս: Շենքից դուրս վերջնական ջրահեռացման ուղին կորոշվի համաձայն տարածքի և ուղաձիգ համահարթեցման նախագծի:

2.6 Էլ. մատակարարում

Ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի էլեկտրամատակարարումն համաձայն ՀԷՑ ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանների / կցված է հավելվածների բաժնում /:

Տարածքի էլեկտրամատակարարման իրականացման նպատակով, տարածքում տեղադրել 2x2000 ԿՎԱ հզորության 35/0,4 կՎ ենթակայան: Ենթակայանի հիմնական և պահուստային սնումն իրականացնել «Մերգելյան 1» և «Մերգելյան 2» 35 կՎ մալուխային գծերի՝ երկշղթա օդային հատվածի թիվ 1 հենարանից ճյուղավորումներով, կառուցելով մոտ 1000մ 35կՎ էլ, հաղորդման գծեր: Ճյուղավորումների սկզբում տեղադրել 35 կՎ լարման գծային բաժանիչներ: Ռելեական պաշտպանությունը և ավտոմատիկան նախատեսել համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 592- որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգի՝ N592-Ն էլեկտրատեղակայանքների պաշտպանության և

ավտոմատիկայի սարքվածքներին ներկայացվող պահանջներ, պաշտպանության միջոցների ծավալը և կառուցվածքը համաձայնեցնելով՝ «ՀԷՅ» ՓԲ Ընկերության հետ:

Սահմանազատման կետերում՝ ե/կ-ն սնող 35 կՎ ճյուղավորումների սկզբում, տեղադրել և օրինականացնել հաշվառքի սարքեր տեղակայել հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորներ, բացառությամբ Էլեկտրոնային առևտրային հաշվիչների, այն տեղադրվում է «ՀԷՅ» ՓԲԸ-ի կողմից): Էլ.մատակարարման նախագիծը՝ նախապես համաձայնեցնել Բարձրավոլտ ցանցերի սպասարկման ծառայության, «ՀԷՅ» ՓԲ Ընկերության տեխնիկական տնօրենի և համապատասխան այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:

2.7 Գազամատակարարում

Ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի գազամատակարարումն $P=0.3$ ՄՊա ճնշման և $Q = 170$ մ³/ժամ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել ԳԲԿ Երևան-4 սնող $D_{պ}=500$ կողմնատար-գազատարից /տեխնիկական պայմանը կցված է հավելվածների բաժնում/:

3. ԿԱՆԱՀԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում:

Կանաչապատման աշխատանքներն կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N108-Ն որոշման համապատասխան:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Բուսականության տեսակային և քանակային կազմը ներկայացված կանաչապատման սխեմայի վրա:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,
- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,
- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,
- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,
- Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատնկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ

գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Կանաչապատ տարածքների ոռոգումն ջուրը կմատակարարվի ԹՈՒՄՈ համալիրի ոռոգման ցանցից:

Կանաչապատ տարածքների ոռոգումն ջուրը կմատակարարվի ԹՈՒՄՈ համալիրի ոռոգման ցանցից, /պայմանագիրը կցված է Հավելվածներ բաժնում/

Նախնական հաշվարկներով տարածքի կանաչապատման համար անհրաժեշտ է 1647 մ³ բուսահող, ինչը ավելի ստույգ կլինի տարածքի «Կանաչապատման և արդիականացման նախագիծ» մշակելուց հետո: Բուսահողի ձեռքբերման վայրը կորոշվի շինարարական աշխատանքների ավարտից հետո, ինչը նախապես կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, համաձայն ՀՀ գործող իրավական ակտերի:

Ծառերի և թփերի տեսակների ցանկ՝

- Գիհի բազմապտուղ՝ 6 հատ
- Տանձենի կովկասյան՝ 1 հատ
- Բոխի արևելյան՝ 1 հատ
- Զկեռնի գերմանական՝ 2 հատ
- Ընկուզենի սովորական՝ 2 հատ
- Կաղամախի՝ 2 հատ
- Չիչխան սովորական՝ 2 հատ
- Պիստակենի բթատերև՝ 2 հատ
- Ծորենի սովորական՝ 5 հատ
- Գիհի՝ 5 հատ

3.1.1 Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ²:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ոռոգում՝ $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$


որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ $S_1 = 8978 \text{ մ}^2$,

K – ոռոգման օրական հաճախականությունն է, $K = 2$

t – ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է, $t = 175$ օր

$$W_{u.3} = (0.006 \times 8978) \times 2 \times 175 = \underline{\underline{18853.8}} \text{ մ}^3/\text{տարի}$$

Ստորև ներկայացվում է կանաչապատման սխեման, տարածքը նախատեսվում է կանաչապատել դեկորատիվ խոտաբույսերով և կազմակերպել ընդհանուր խոտածածկ, ընդհանուր 8978քմ՝ Կանաչապատում կոնսոլների տակ և ստորգետնյա մասերի վրա 700քմ և կանաչապատում 8278քմ:



Ծառերի և թփերի տեսակների ցանկ / List of trees and shrub species					
Համար Number	Պայմանական նշան Symbol	Նկար Image	Անվանում Name	Քանակ (իստ) Quantity (pcs)	Նշում Note
Ծառեր / Trees					
1			Գլխի բազկապտուղ Juniperus polycarpus	6	Աշտարակաթ վիշապերն ծառ Evergreen coniferous tree
2			Տանձենի կովկասյան Pyrus caucasicus	1	Ծաղկող հաստաբուն ծառ Flowering tree with a thick trunk
3			Բոխի արևելյան Carpinus orientalis	1	Կեչազգիների ընտանիքի ծառ Tree in the birch family
4			Շլեռնի գերմանական Mesplus germanica	2	Կարդազգիների ընտանիքի թուփ Shrub or small tree in the rose family
5			Շնկազգիների սովորական Juglans regia	2	Շնկազգիների ընտանիքի ծառ Tree in the walnut family
6			Կաղամախի Populus tremula	2	Բարդի ցեղի տերևաթափ ծառ Poplar spice deciduous tree
7			Գիգիան սովորական Hippophae rhamnoides	2	Փշատազգի վիշապաթուփ ծառ Spiny deciduous shrub
8			Պիստակենի բթաթուփ Pictacia nufica	2	Ծաղկող հաստաբուն ծառ Flowering tree with a thick trunk
Ընդամանը ծառերի քանակ Total quantity of trees:				18	
Թփեր / Shrubs					
9			Երբեմնի սովորական Berberis vulgaris	5	Խոշոր թուփ Large evergreen shrub
10			Գլխի Juniperus oxycedrus	5	Խոշոր թուփ Large evergreen shrub
Ընդամանը ծառերի քանակ Total quantity of trees:				10	

Բույսերի և ծաղիկների տեսակների ցանկ / List of plantings and flowers					
Համար Number	Պայմանական նշան Symbol	Նկար Image	Անվանում Name	Մակերես Area	Նշում Note
Կանաչ բույսեր / Green plantings, high grasses					
11			Լեսսինգա Sipa lessingiana Զյուլդախտ անտառային Festuca drymeje Հելիոտրիխոն Helictotrichon sempervirens Չեռնի գերմանական Mespilus germanica	1378.9 մ²	
12			Էլիմա Elymus macrourus Սենտաուերա Centaurea depressa	1032.1 մ²	
13			Էրիգոն Erigeron karvinskianus Հայկական կակա Papaver lateritium Սենտաուերա վարդագույն Centaurea tchitcheffii	1236.2 մ²	
14			Ֆրիլերիա Fritillaria caucasic Ալպյան աստրա Aster alpinus Տագետես Tagetes patul	1159.2 մ²	
Ընդամուր մակերես. Total area:				4806.4 մ²	
Կանաչապատում տարածքի սահմաններում / Greenery within the boundaries					
15			Սիզալարգ Grass	4171.6 մ²	
Ընդամուր մակերես. Total area:				4171.6 մ²	
Ընդամուր կանաչապատման մակերես. / Total greenery area:				8978 մ²	

4. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՍՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, իսկ շահագործման ժամանակ 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

4.1 Աշխատանքների կատարման սխեմա

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՀՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 30 ամիս: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով
- Ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքերի շինարարությունն՝ ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Հողային աշխատանքները փոստրակում և խրամուղիներում կատարվում են “հետ-բահ” CAT 320 էքսկավատորով:

Շենքի պատող և կրող կոնստրուկցիաների իրականացման համար ընտրված է QTZ 280 XCP330HG(7525-16) կցովի կրունկների կիրառում:

Շինարարական աշխատանքները անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները ըստ ՀՆԵՎԿ III-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոստրակի ընդունման ակտ):

Բեռի ուղղահայաց և հորիզոնական տղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը /նախագծով այն համարվում է 10մ, նշահարելով դեղին գույնով, ապահովել դիսպետչերական կամ մեկ աշտարակային կոունկի գործողության գոտում բացառել կից շենքի աշտարակային կոունկի գործողությունը տվյալ գոտում/: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՀՆ III-IV.2008-ի դրույթներով: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Կոունկով բեռի տեղափոխումը բացառիկ դեպքերում գոյություն ունեցող շենքերի տանիքի վրայով կատարվում է շինարարության ղեկավարի գրավոր կարգադրությամբ, ապահովվելով բեռի անվտանգ տեղափոխումը, անվտանգության ճարտարագետի մշտական ներկայությունը:

Աշտարակային կոունկի մոնտաժումը ե/բետոնե ծածկի սալի վրա կատարվում է նախագծի կոնստրուկտորի հիմնավորված լոկալ հաշվարկով: Աշտարակային կոունկի մոնտաժման աշխատանքները իրականացվում է համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության կողմից ըստ կոունկի անձնագրային տվյալների:

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քանի որ այս տարածքը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում, ամբողջ շինարարության ընթացքում միջոցառումներ իրականացնել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց զերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և ապահովել ոռոգման ջրով:

Թույլ չտալ նոքմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ

չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցմել աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Նախնական գնահատման հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են

Ինժեներական եվ կիրառական գիտությունների համալիրի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Քանդման աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

4.2 Շինարարության ժամկետները

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հիմնական աշխատանքների ծավալների, աշխատատարության հաշվարկման և տեխնոլոգիական հաջորդականության հաշվառման հիման վրա:

Օբյեկտի կառուցման ընդհանուր տևողությունը կազմում է **30 ամիս, 2.5 օրացուցային տարի**, որից 2 ամիսը նախատեսված է նախապատրաստական աշխատանքների համար :

Բանվորների առավելագույն քանակը կազմել է **46 մարդ**, միջինը՝ **34 մարդ**: Բանվորական ուժի օգտագործման անհամաչափության գործակիցը կազմում է **1,44**:

Գումարային աշխատատարությունը կազմում է **28378,0 մարդ-օր**:

4.3 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Աշտարակային կցովի վերամբարձ կոունկ	QTZ 280	2
2	Ավտոմոբիլային կոունկ	LIEBHERR LTM 1100-4.2	1
3	Ավտոկոունկ	KC 45717-1	1
4	Էքսկավատոր	CAT 320	1
5	Հորատող մեխանիզմ	pf 1200,	2
5	Գլղոն	CAT CS 563	1
6	Բուլդոզեր	CAT D6R	1
7	Շարժական կոմպրեսոր	Comp air C 76	1
8	Ավտոբետոնապոմպ	Merc B. Acrtos 4144 D	2
9	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	2
10	Թրթռիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	4
11	Փոխարկիչ թրթռիչների համար	ИБ-4	2
12	Տոփանիչներ պնևմո և ձեռքի		4
13	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	4
14	Ավտոինքնաթափ		ըստ հաշվարկի
15	Ավտոբետոնախառնիչ	Kamaz 58149 z	ըստ հաշվարկի

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

4.4 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Հիմնական աշխատանքների ծավալները բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Հիմնական շինարարական աշխատանքների ծավալներ

NN	Աշխատանքների անվանումները	Չափման միավ.	Ծավալը
1	Մատույցային ճանապարհների կարգավորում և առկա հողակույտերի հեռացում	մ ³	2000,0
2	Փոստրակի մշակում հիմնային սալի համար	մ ³	7500,0
3	Ետլիցք	մ ³	700,0
4	Ավելորդ բնահողի տեղափոխում /մինչև 13 կմ հեռավորության վրա համապատասխան մարմինների հետ համաձայնեցմամբ/	մ ³	6800,0
	Ստորգետնյա մասի երկաթբետոնե կոնստրուկցիաներ		
5	Սյուներ	մ ³	389,03
6	Հեծաններ	մ ³	490,0
7	Ծածկեր	մ ³	50,84
8	Պատեր	մ ³	1128,43
7	Աստիճաններ	մ ³	34,0
	Վերգետնյա մասի երկաթբետոնե կոնստրուկցիաներ		
9	Սյուներ	մ ³	440,98
10	Հեծաններ	մ ³	1858,9
11	Ծածկեր	մ ³	3305,63
12	Պատեր	մ ³	1486,95
13	Աստիճաններ	մ ³	38,1
14	Տանիքի և արահետների ծածկեր	մ ³	1050,0
15	Ամրան և մետաղական կոնստրուկցիաներ	տ	2260,0

Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ

սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավագ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\Sigma. \text{t.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 41 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 780 օր

$$W_{\Sigma. \text{t.}} = (5 \times 0.016 + 41 \times 0.025) \times 780 = 861.9 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.105 \text{ մ}^3/\text{օր:}$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 15000 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 450

$$U_1 = 15000 \times 0.0015 \times 450 = 10125 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 22.5 \text{ մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 10161,9 մ³/շին. ժամ:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն :

Ջրամատակարարումը կիրականացվի է գոյություն ունեցող ջրատարից, համաձայն Վեոլիա ջուր ԲԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին:

Անիվների լվացման, ջրցանի, բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը կիրականացվի համաձայն Վեոլիա Ջուր ԲԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

5. ԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

Հետազոտվող տեղամասը գտնվում է ՀՀ Երևան քաղաքի արևելյան մասում, Աջափնյակ վարչական շրջանի տարածքում, Հալաբյան փողոց 16/2 հասցեյում, ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի արևելյան եզրամասում (նկ. 1.1):



Նկար 1.1. Ուսումնասիրվող տեղամասի տեղադիրքը (Մ-բ 1:3 000)

Տեղամասի ինժեներա-երկրաբանական պայմանները պարզաբանելու նպատակով կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- Նախկինում տվյալ և հարակից տարածքներում տարբեր նախագծահետազոտական և գիտաարտադրական կազմակերպությունների կողմից կատարված

հետազոտությունների հաշվետու նյութերի հավաքագրում, վերլուծություն և ընդհանրացում:

- Հետազոտվող տեղամասի, հարակից տարածքների և շինհրապարակի մանրամասն ինժեներա-երկրաբանական տեղագնում:
- Հավաքագրված արխիվային և դաշտային նյութերի կամերալ մշակում և սույն եզրակացության կազմում:

5.1 Երկրաբանական ուսումնասիրվածության պատմությունը

Երևանյան շրջանի երկրաբանական կառուցվածքի, տեկտոնիկայի և երկրաբանական զարգացման պատմության ուսումնասիրմամբ երկար տարիների ընթացքում զբաղվել են տարբեր կազմակերպություններում. ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում, երկրաբանական վարչության ստորաբաժանումներում և այլն, ինչպես նաև առանձին հետազոտողները՝ Ա. Ասլանյան, Ա.Գաբրիելյան, Կ.Պաֆֆենհոլց, Ռ. Առաքելյան, Ս. Արզումանյան, Ա. Նազարյան և ուրիշներ:

Տարբեր տարիների գիտական հրատարակումներում ֆոնդային և արխիվային նյութերում կարելի է գտնել Երևան քաղաքի տարածքի բավականին մանրամասն և հանգամանալի երկրաբանական նկարագրությունը, որտեղ պարզաբանված են մեծ քանակով հարցերը նվիրված այս ոլորտի հետազոտություններին:

5.2 Շրջանի ընդհանուր երկրաբանական կառուցվածքի համառոտ նկարագրությունը

Տարածքի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է պինդ, ծակոտկեն, մոխրագույն և մուգ մոխրագույնի ստոին Չորրորդական հասակի բազալտային անդեզիտներով և տրախիբազալտներով, որոնք ունեն 20-30մ միջին հզորություն: Նշված բազալտները առաջացնում են ընդարձակ ծածկոց կազմված լավային արտահոսքերի շարքերից, որոնք և ձևավորել են Կոտայք-Եղվարդ սարահարթի լավային շերտախումբը: Նրանց կառուցվածքը լավ երևում է Հրազդան գետի կիրճում: Լավաները ծածկված են Չորրորդական և ժամանակակից, էյուվիալ, դեյուվիալ, ալյուվիալ խոշորաբեկորային, խճային, ավազակավային, կավավազյին և կոպճային գոյացումներով:

5.3 Տեղամասի ինժեներաերկրաբանական պայմանները

Նախագծային հարցերին պատասխանելու և տեղամասի ինժեներա-երկրաբանական կտրվածքը մինչև պահանջվող խորությունը ուսումնասիրելու համար, տեղամասում կատարվել են հորատման աշխատանքներ:

Ստորև տրվում է ուսումնասիրվող տարածքի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների ընհանուր բնութագրերը:

Շերտ 1. տՉ4. Լիցքային գրունտներ, բաց դարչնագույն խոշորաբեկորային և խճա-մանրախճային կազմի, կավավազային լցանյութով 20-35%: Շերտի հզորությունը տատանվում է 1.5-4.0 մ սահմաններում: Ունի համատարած տարածում: Հանդիպում է BH-01 - BH-06 հորատանցքերում: Ըստ § 24-ա աղ.1-1 (ՇՆԿ IV-2-82), II կարգ, ρ-1800կգ/մ³:

Շերտ 2. edQ4. Բաց դարչնագույն ավազակավ պինդ, թեթև, փոշային մինչև 20% ավազային լցանյութով: Շերտի հզորությունը տատանվում է 2.2-5.2 մ սահմաններում: Ունի համատարած տարածում: Հանդիպում է BH-01 - BH-06 հորատանցքերում: Ըստ § 12 , աղ.1-1 (ՇՆԼԿ IV-2-82) V կարգ, $\rho = 2000$ կգ/մ³:

Շերտ 3. βQ_1 . Բազալտ մոխրագույն, ծակոտկեն, միջին ճեղքավորված: Շերտի հզորությունը տատանվում է 1.1-10.0 մ սահմաններում: Ունի համատարած տարածում: Հանդիպում է BH-01 - BH-06 հորատանցքերում: Ըստ § 19, աղ.1-1 (ՇՆԼԿ IV-2-82) VII կարգ, $\rho = 2600$ կգ/մ³:

Շերտ 3a. βQ_1 . Բազալտ մոխրագույն, խիստ հողմնահարված ավազային և մանրախճա-խճային ենթաշերտերով: Շերտի հզորությունը տատանվում է 0.4-3.0 մ սահմաններում: Ունի համատարած տարածում: Հանդիպում է BH-01 - BH-06 հորատանցքերում: Ըստ § 13, աղ.1-1 (ՇՆԼԿ IV-2-82) IV կարգ, $\rho = 1800$ կգ/մ³:

Շերտ 3b. βQ_1 . Բազալտ գորշ, երկաթայնացված, խիստ հողմնահարված ավազային և մանրախճա-խճային ենթաշերտերով: Շերտի հզորությունը տատանվում է 1.0-7.0 մ սահմաններում: Ունի սահմանափակ տարածում: Հանդիպում է BH-01, BH-03, BH-05 հորատանցքերում: Ըստ § 13, աղ.1-1 (ՇՆԼԿ IV-2-82) IV կարգ, $\rho = 1800$ կգ/մ³:

Շերտ 4. edQ4. Ավազակավ պինդ, թեթև, փոշային, դարչնագույն ավազի լցանյութով 15-20%: Շերտի հզորությունը տատանվում է 1.0-4.0 մ սահմաններում: Ունի համատարած տարածում: Հանդիպում է BH-01 - BH-06 հորատանցքերում: Ըստ § 33-գ, աղ.1-1 (ՇՆԼԿ IV-2-82) III կարգ, $\rho = 1900$ կգ/մ³:

Շերտ 5. alQ1. Ճալաքարա-կոպճային գրունտ, երկաթայնացված, ավազի լցանյութով 20-25%: Շերտի հզորությունը տատանվում է 1.0-2.0 մ սահմաններում: Ունի սահմանափակ տարածում: Հանդիպում է BH-05 հորատանցքում: Ըստ § 6-վ, աղ.1-1 (ՇՆԼԿ IV-2-82) III կարգ, $\rho = 1950$ կգ/մ³:

Հիդրոերկրաբանական տեսակետից հետազոտվող տեղամասի սահմաններում գտնվող ստորգետնյա ջրերը կապված են ռելիեֆի ծածկված գետահովիտների և ռելիեֆի մյուս "բացասական" հին ձևերի հետ: Տեղամասի սահմաններում դրանք տեղադրված են 30.0 մետրից խորը: Այս ջրերը բեռնաթափվում են Հրազդան գետի հովտում, իսկ ավելի խորը տեղադրված ջրերը սնում են Արարատյան հարթավայրի հորիզոնները:

5.4 Ինժեներաերկրաբանական էլեմենտների (ԻԵԷ) ֆիզիկամեխանիկական հատկությունները

Դաշտային ուսումնասիրությունների տվյալների հիման վրա, նախորդ բաժնում տարանջատվել էր 7 տեսակի գրունտ, յուրաքանչյուրը որպես մեկ շերտ, հաշվի առնելով նրանց ֆիզիկամեխանիկական հատկությունները և ծագումը: Համաձայն գործող նորմատիվային փաստաթղթի՝ վերը նշված գրունտները կարելի է խմբավորել ինժեներաերկրաբանական էլեմենտների մեջ: Ինժեներա-երկրաբանական էլեմենտների (ԻԵԷ) նկարագրությունը և ֆիզիկամեխանիկական հատկությունները բերված են ստորև՝ ըստ հերթականության վերևից ներքև մինչև ուսումնասիրած խորությունը:

Հիմքերի բացման ժամանակ փոսորակի պատի բնական թեքման անկյունը նշված գրունտի տարածման սահմաններում կարելի է ընդունել 40° - 45°:

ԻԵԷ-1 (Շերտ-1 և 2). Լիցքային և ավազակավային գրունտներ, որոնք չեն կարող հանդիսանալ որպես հիմնատակ և ենթակա են հեռացման:

ԻԵԷ-2 (Շերտ-3). Բազալտ մոխրագույն, ծակոտկեն, միջին ճեղքավորված: Ունի համատարած տարածում: Խտություն բնական վիճակում՝ 2.15-2.63 գ/սմ³: Ծակոտկենությունը՝ 6-22 %: Միառանցք սեղմման դիմադրությունը ջրհագեցած վիճակում՝ 46-144 ՄՊա: Գրունտը բարենպաստ է շինարարության համար:

ԻԵԷ-3 (Շերտեր-3a,3b,4,5). Հողմնահարված և երկաթայնացված բազալտ, փոշային ավազակավ, ճալաքարա-կոպճային գրունտ: Ունի համատարած տարածում: Խտություն բնական վիճակում՝ 1.83-1.89 գ/սմ³: Պլաստիկության թիվը - 0.082-0.086: Ծակոտկենության գործակիցը՝ 0.619-0.638: Գրունտը ոչ բարենպաստ է շինարարության համար:

Հաշվի առնելով ԻԵԷ-3 որպես ոչ բարենպաստ շինարարության համար, ըստ СП 22.13330.2016 հավելված Բ, աղյուսակ Բ.8., կատարվել է գրունտների հաշվարկային դիմադրությունը - R0: Համապատասխան շերտերը ունեն՝ ծակոտկենության գործակցի միջին արժեք $e = 0.628$, հոսունության ցուցիչ $IL = -0.66$, իսկ $R0 = 250$ կՊա, կամ 2.54 կգ/սմ²:

Ամփոփում և եզրակացություն

- Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի, ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի արևելյան եզրամասում:
- Ինժեներաերկրաբանական դաշտային ուսումնասիրություններն իրականացվել են համաձայն պատվիրատուի նախագծային կազմակերպության տեխնիկա-կան առաջադրանքի 30.10.2021 - 13.11.2021 ժամանակահատվածում:
- Տարածքն ունի ցուրտ ձմեռով և շոգ ամառով խիստ ցամաքային կլիմա:
- Ինժեներաերկրաբանական ակնադիտական ուսումնասիրությունները կատարվել են վեց հորատանցքերով (140 գ.մ.), վերցվել է՝ 15 նմուշ:
- Տեղամասը ինժեներաերկրաբանական և գրունտային պայմանների տեսակետից համապատասխանում է I կարգի բարդության:
- Ուսումնասիրվող տարածքի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը ներկայացված է 3 ԻԵԷ;
- **ԻԵԷ-1.** *t, edQ₄. Լիցքային և ավազակավային գրունտներ:*
- **ԻԵԷ-2.** *βQ₁. Ծակոտկեն, մոխրագույն բազալտներ:*
- **ԻԵԷ-3.** *al, edQ₁₋₄. Փոշային ավազակավ, ճալաքարա-կոպճային գրունտ*
- Ուսումնասիրության աշխատանքների ժամանակ գրունտային ջրեր չեն հանդիպել:
- Դաշտային աշխատանքների ժամանակ չի հանդիպել գործող որևէ ժամանակակից երկրաբանական պրոցես:
- Շինարարության համար որպես բարենպաստ ընդունել ԻԵԷ - 2ը:
- Միաժամանակ պետք է նշել, որ հնարավոր որոշ անհամապատասխանությունները կճշտվեն շինարարական հրապարակը փորելուց հետո ինժեներ-երկրաբանի կողմից գննման ակտը կազմելու ժամանակ:

5.5 Կլիման

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան -30 °C, բացարձակ մաքսիմումը հասնում է $+42$ °C: Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի

հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ 22-01-2024 տվյալների համաձայն:

Օդի միջին ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 2.1.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-27	-02	58	119	166	21.3	249	247	20.4	137	66	02	11.9

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Երևան-«Արաբկիր» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը, %

Աղյուսակ 2.2.

Միջինը ըստ ամիսների, %												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
77	70	60	57	57	52	50	50	51	60	68	77	61

Տեղումների բնութագիրը ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում:

Տեղումների բնութագիրը

Աղյուսակ 2.3.

Տեղումների քանակը _____ միջին _____, մմ մաքսիմալ օրական												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
<u>28</u> 25	<u>31</u> 28	<u>38</u> 44	<u>52</u> 34	<u>54</u> 47	<u>27</u> 47	<u>18</u> 34	<u>8</u> 22	<u>13</u> 47	<u>29</u> 34	<u>29</u> 48	<u>27</u> 26	<u>354</u> 48

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Երևան-«Արաբկիր» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.4-ում:

Քամու բնութագիրը

Աղյուսակ 2.4.

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, %							
		Միջին արագությունը, մ/վ				ըստ ուղղությունների			
		Հյուսիսային (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)
2	3	4	5	6	7	8	9	10	11
889,7	հունվար	13	29	8	7	14	20	6	3
		1.9	1.9	1.6	1.7	1.8	1.5	1.8	1.9
	ապրիլ	15	29	6	8	12	17	9	4
		3.1	2.6	2.3	2.2	2.5	2.4	2.5	2.5
	հուլիս	28	32	3	3	8	16	7	3
		6.0	4.8	1.7	1.7	1.7	1.7	2.0	2.6
	հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3
		2.9	2.5	2.0	1.9	1.7	1.9	1.9	2.0



5.6 Օդային ավազան


Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոթերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից:

Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան:


2024 թվականի 4-րդ եռամսյակում Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան դեկտեմբեր ամսին աննշան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն:

Ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:






Գծապատկեր 15. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 23. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի SO_2 միջին
ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

5.7 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «ՀՄԿ» ՊՈԱԿ-ի կողմից, որի տվյալները 2022 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ₅-ով, ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով և վանադիումով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

5.8 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

5.9 Հողային ռեսուրսներ

Նախատեսվող համալիրի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 7500մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 700 մ³ հետլիցք: Ավելցուկային 6800 խմ հողային զանգվածը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով՝

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինարարական աղբից:

5.10 Բուսական աշխարհ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝ 1. Ֆրիգանա (Ժայռային բուսականություն), 2. Տոմիլյար (անապատային): Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Գործունեության ենթակա տարածքում տարածված է կիսաանապատային գոտուն բնորոշ բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն, մասնավորապես՝ Սեզ սողացող (*E. repens*), Սեզ սանրանմանը (*E. cristatum*), Սեզ մազակիրը (*E. trichophora*), Սեզ միջինը (*E. intermedia*), Սեզ երկարավունը (*E. elongatum*):

Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել:

5.11 Կենդանական աշխարհ

Երևանի շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով:

Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրաույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Մողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դոդոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատու սցինկը, օձերից՝ կույր օձուկը, ռնգեղջյուր օձը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր: Հրագդան գետում հանդիպում են ձկների 7 տեսակ:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Աջափնյակ վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների հետ:

5.12 Պատմամշակութային հուշարձաններ

Այս հոդվածը ներկայացնում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը: Ցանկում ներառված է ընդամենը 20 հուշարձան (16 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ
Աշտարակ	մ.թ.ա. 2 հզ կես	Աջափնյակի հին գերեզմանոցում	—	1.1/1	Հ	հայտնաբերված՝ 1995 թ.
Բնակատեղի	մ.թ.ա. 2 հզ	հվ-ամ մասում, Միլիկյան թաղամաս	—	1.1/2	Հ	երկաթուղու Միլիկյան կայարանից 2,5-3 կմ հս, «Դեմեր» վայրում
Դամբարանադաշտ	մ.թ.ա. 2-1 հզ		—	1.1/2.1	Հ	բնակատեղիի ամ մասում, երկաթուղու Միլիկյան կայարանից 0,5 կմ հս
Դամբարան-1	մ.թ.ա. 2-1 հզ		—	1.1/2.1.1	Հ	երկաթգծից 30 մ ամ

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ
Դամբարան-2	մ.թ.ա. 2-1 հզ		—	1.1/2.1.2	Հ	նախորդից 50 մ ամ
Դամբարան-3	մ.թ.ա. 2-1 հզ		—	1.1/2.1.3	Հ	նախորդից 50 մ ամ
Խճանկար	1987 թ.	Մարգարյան փող. 6	—	1.1/3	S	Հանրապետական կլինիկական հիվանդանոցի նիստերի դահլիճի մասնաշենքի ճակատին, նկ՝ Ա. Բաղդասարյան, Է. Կարսյան, Զ. Միրզոյան, Վ. Պետրոսյան
Հուշարձան Արցախյան պատերազմում զոհված աջափնյակցի ազատամարտիկների	1998 թ.	Սեբաստիայի և Միրաքյան փող. միջնամասում	—	1.1/4	S	
Հուշարձան Համազասպ Բաբաջանյանի	1982 թ.	Հ. Շիրազի փող. 25	—	1.1/5	S	ԴՕՍԱԱՖ-ի համանուն միացյալ տեխնիկական դպրոցի բակում, քանդ.՝ Գ. Եփրոյան, ճարտ.՝ Ռ. Մանուկյան
Հուշարձան Արամայիս Երզնկյանի	1985 թ.	Արզումանյան փող. 8	—	1.1/6	S	թիվ 118 համանուն դպրոցի առջև, քանդ.՝ Ս. Բարխուդարյան
Հուշարձան Մեծ եղեռնի Սեբաստացի զոհերին	1970 թ.	Գ. Զոհրապ և Ա. Մարգարյան փող. խաչմերուկ	—	1.1/7	S	ճարտ.՝ Ռ. Իսրայելյան
Հուշարձան Պեյո Յավոբովի	1966 թ.	Արզումանյան փող. 22	—	1.1/8	S	թիվ 131 համանուն դպրոցի առջև, ճարտ.՝ Գ. Ահարոնյան
Վիշապաքար	մ.թ.ա. 3-2 հզ	Մարգարյան փող. 2	—	1.1/9	Հ	ՀՀ ԳԱԱ Երևանի ֆիզիկայի ինստիտուտի առջև
Քանդակ «Անուշ և Սարո»	1973 թ.	Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգի	—	1.1/10	S	քանդակագործ՝ Լևոն Թորմազյան
Քանդակ «Արուս»	1968 թ.	Մարգարյան փող. 2	—	1.1/11	S	Երևանի ֆիզիկայի ինստիտուտի առջև, քանդ.՝ Ա. Չաքմաքչյան

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ
Քանդակ «Լոռեցի Սարո»	1986 թ.	Հովհ. Թումանյանի անվ. մանկական զբոսայգում	—	1.1/12	S	քանդ.՝ Ս. Բաղդասարյան
Քարայր-կացարան «Աջափնյակ-1»	մ.թ.ա. 14-12 դդ. 16-17 դդ.	Հրազդանի աջ ափին	—	1.1/13	Հ	ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի ինստիտուտի պարսպի մոտ, գետից 60 մ վերև, հայտնաբերված 1975 թ.
Քարայր-կացարան «Աջափնյակ-2»	մ.թ.ա. 14-13 դդ. 16-17 դդ.	Հրազդանի աջ ափին	—	1.1/14	Հ	ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի ինստիտուտի փորձակայանի մոտ, հայտնաբերված 1975 թ.
Քարայր-կացարան «Աջափնյակ-3»	16-17 դդ.	Հրազդանի աջ ափին	—	1.1/15	Հ	ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի ինստիտուտի փորձակայանի մոտ, ժայռածածկ, հայտնաբերված 1975 թ.
Քարայր-կացարան «Աջափնյակ-4»	16-17 դդ.	Հրազդանի աջ ափին	—	1.1/16	Հ	Դավիթաշենի կամրջից 0,5 կմ հս, կիրճի 3-րդ դարավանդին, հայտնաբերված 1975 թ.

6. ՀՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծման ընթացքում գնահատվել են շինարարական և շահագործման փուլերում շրջակա միջավայրի վրա ակնկալվող հնարավոր ազդեցությունները:

Կատարվել է շինարարական աշխատանքների նախապատրաստման, շինհրապարակների կազմակերպման և բուն շինարարության ժամանակ հավանական ազդեցությունների գնահատում և առաջարկվել են համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

Նախապատրաստական աշխատանքները նախատեսում են.

- օրենքով սահմանված բոլոր անհրաժեշտ թույլտվությունների, համաձայնությունների և ըստ անհրաժեշտության հավաստագրերի ձեռքբերումը,
- շին. ճամբարների ու շինանյութերի պահեստավորման տարածքների պլանավորումը,
- օդի, հողի, ջրերի աղտոտումը կանխարգելող միջոցառումների ապահովումը,
- արտակարգ իրավիճակների կառավարման պլանի առկայությունը և այլն:

Շինարարության կապալառուի բնապահպանական, սոցիալական և անվտանգության հարցերով ինժեները պետք է գնահատի բոլոր հնարավոր ռիսկերը և սահմանի դրանց կառավարման պլանը, անվտանգության հրահանգները:

Իրականացված ուսումնասիրությաննների արդյունքում պարզվել է, որ նախատեսվող գործունեության իրականացման/շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ: Ազդեցությունները կլինեն ժամանակավոր և կարող են արդյունավետ կառավարվել մեղմացուցիչ միջոցների կիրառմամբ: ԲԿՊ-ն և մոնիթորինգի ծրագիրը կիրականացվի կապալառուի կողմից շինարարության փուլում, իսկ ԲԿՊ-ի համապատասխան դրույթները կընդգրկվեն շինարարական աշխատանքների պայմանագրերի ընդհանուր մասնագրերում՝ ԲԿՊ-ի իրականացումն ապահովելու համար: Բնապահպանական մոնիթորինգի պլանը կազմվելու է մրցութային փաստաթղթերի բաղկացուցիչ մաս:

6.1 Շինարարական աշխատանքների ընթացքում ակնկալվող ազդեցություններ

Շինարարության փուլում կանխատեսվում են հետևյալ հիմնական ազդեցությունները.

6.1.1 Օդային ավազանի աղտոտվածություն

Արտանետումների առաջացումը կապված է շինարարական աշխատանքների իրականացման փուլում շինարարական և վերակառուցման, մասնավորապես, փորման, քանդման, ինչպես նաև շենքի կառուցման, կոմունիկացիաների անցկացման և բարեկարգման հետ: Արտանետումները առաջանալու են նյութերի տեղափոխման և բեռնատարների տեղաշարժման հետ: Փորման-թափման աշխատանքներից առաջացող անօրգանական փոշու և բեռնատարների ու սարքավորման աշխատանքի արդյունքում այրվող վառելիքի փասսակար նյութերի արտանետումներն առաջանում են շինարարական աշխատանքների ընթացքում, արտանետումներ են, որոնք առաջանում են շինարարական աշխատանքների արդյունքում առաջացող բիտումից և ամրակցման աշխատանքներից: Ներկայացվող բոլոր արտանետումները կրելու են ժամանակավոր բնույթ և չեն գերազանցում սահմանային թույլատրելի արտանետումները:

6.1.2 Ջրօգտագործում և ջրահեռացում

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինարարական հրապարակի ջրցանման, մաքրման, որոշ շինարարական աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար:

Շինարարական աշխատանքներում ներգրավված աշխատողների համար խմելու և կենցաղային կարիքների համար նախատեսված անհրաժեշտ ջրաքանակի ապահովումը շինարարության շրջանում նախատեսվում է իրականացնել համաձայն Վեոլիա ջուր ԲԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին:

Շինարարական հրապարակի ջրցանման, մաքրման, որոշ շինարարական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ ջրաքանակի ապահովումը նախատեսվում է իրականացնել համաձայն Վեոլիա Ջուր ԲԲԸ-ի կողմից տրվող տեխնիկական պայմանի:

6.1.3 Թափոններ

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը,
1.	Շինարարական աղբ, այդ թվում քանդման աշխատանքներից առաջացած	IV	9120060101004	380 մ³
2.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	0.7 տ/տարի
3.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	31401100 08 09 5	6800 մ³
4.	Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ	IV	35131100 01 00 4	7 մ³
5.	Չտեսակավորված ալյումինի ջարդոն	V	35310101 01 99 5	3 մ³
6.	Յուղերով աղտոտված ավազ /յուղի պարունակությունը 15%-ից ավելին/	III	31402303 04 03 3	8 մ³
7.	Պողպատե եռակցման էլեկտրոդների մնացորդներ և կիսայրուկներ	IV	35121601 01 99 5	0.1տ

Բոլոր առաջացող թափոնների համար շին. հրապարակում նախատեսված են լինելու պահման հարթակներ, իսկ որոշ թափոնատեսակների համար նաև կոնտեյներներ: Շինարարական աղբը որոշակի քանակներ կուտակվելուց հետո հեռացվելու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված աղբավայր: Եռակցման խարամը փոքր քանակներով խառնվելու է կենցաղային աղբի հետ և նույնպես հեռացվելու է աղբավայր:

Սև և գունավոր մետաղները նույնպես հավաքվելու են շին. հրապարակում և պարբերաբար հանձնվեն մասնագիտացված ընկերությունների:

Շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

6.1.4 Աղմուկ և թրթռում:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՅ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում հողային աշխատանքների իրականացնելիս 2 եքսկավատորներ և 1 կունկ, իսկ շենքերի կառուցման ընթացքում 3 ամրակապովի և մեկ ավտոմոբիլային կունկ: Հաշվարկը առված է ենթադրելով,

որ այս շին.տեխնիկան շահագործվում միաժամանակ յուրաքանչյուր շինարարության փուլում՝ աղմուկի առավելագույն արժեքը հաշվարկելու համար:

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» շինարարական նորմերի:

Հաշվարկները կատարված են հետևյալ բանաձևով՝

$$L = L_w + 10 \cdot \lg \left(-\frac{\chi \Phi}{\Omega r^2} + \frac{4}{kB} \right)$$

Հողային աշխատանքների փուլ

Ելակետային տվյալներ

- Էքսկավատորի CAT 320 ձայնային հզորություն (L_{w1})՝ 99 դԲ
- Կռունկ LIEBHERR LTM 1100-4.2 ձայնային հզորություն (L_{w2})՝ 100 դԲ
- Հեռավորություն (r)՝ 50 մետր

Հաշվարկի համար անհրաժեշտ գործակիցներ

- $\chi = 1$ (մոտ դաշտի ազդեցության գործակից)
- $\Phi = 1$ (աղմուկի ուղղվածության գործոն՝ համաչափ ճառագայթման համար)
- $\Omega = 2\pi$ (կիսագունդային ճառագայթման տարածություն բացօթյա տարածքի համար)
- $k = 1$ (ձայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- $B = 200$ (սենյակի ձայնագիտական հաստատունը՝ մ²)

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն է՝

- Էքսկավատորի աղմուկի մակարդակ՝ $L_{w1} = 99 + 10 \cdot \log_{10} ((1 \cdot 1/(2/\pi \cdot 50^2) + 4/1 \cdot 200) = 99 + 10 \cdot (-16.98) = 82.02$ դԲ
- Կռունկի աղմուկի մակարդակ՝ $L_{w2} = 100 + 10 \cdot \log_{10} ((1 \cdot 1/(2/\pi \cdot 50^2) + 4/1 \cdot 200) = 100 + 10 \cdot (-16.98) = 83.02$ դԲ

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է՝

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, դրանք համադրում ենք հետևյալ բանաձևով՝

$$L_{A_{\text{եկ}} = 10 \cdot \log_{10} (2 \cdot 10^{\{82.02/10\}} + 10^{\{83.02/10\}}) = 10 \cdot \log_{10} (2 \cdot 10^{\{8.202\}} + 10^{\{8.302\}}) = 87.15 \text{ դԲ}$$

Այսպիսով, շինարարական հրապարակում հողային աշխատանքների ժամանակ երկու էքսկավատոր և մեկ կռունկ միաժամանակ աշխատանելու դեպքում համակցված աղմուկի մակարդակը 50 մետր հեռավորության վրա կազմում է 87.15 դԲ:

Շենքերի կառուցման փուլ

Ելակետային տվյալներ

- Կռունկ QTZ 160 ձայնային հզորություն (L_{w1})՝ 105 դԲ
- Հեռավորություն (r)՝ 50 մետր

Հաշվարկի համար անհրաժեշտ գործակիցներ

- $\chi = 1$ (մոտ դաշտի ազդեցության գործակից)
- $\Phi = 1$ (աղմուկի ուղղվածության գործոն՝ համաչափ ճառագայթման համար)
- $\Omega = 2\pi$ (կիսագունդային ճառագայթման տարածություն բացօթյա տարածքի համար)
- $k = 1$ (ձայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- $B = 200$ (սենյակի ձայնագիտական հաստատունը՝ մ²)

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն է՝

- Կռունկ աղմուկի մակարդակ՝ $L_{w1} = 105 + 10 \cdot \log_{10} ((1 \cdot 1/(2/\pi \cdot 50^2) + 4/1 \cdot 200) = 105 + 10 \cdot (-16.98) = 88.02$ դԲ

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է՝

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, դրանք համադրում ենք հետևյալ բանաձևով՝

$$LA_{\text{էկվ}} = 10 * \log_{10}(3 * 10^{\{88.02/10\}}) = 10 * \log_{10}(3 * 10^{\{8.802\}}) = 92.79 \text{ դԲ}$$

Այսպիսով, շինարարական հրապարակում հողային աշխատանքների ժամանակ երեք կոունկ միաժամանակ աշխատանելու դեպքում համակցված աղմուկի մակարդակը 50 մետր հեռավորության վրա կազմում է 92.79 դԲ:

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը 200 կգ/մ^3 : Ցանկապատը հանդիսանում է միաժամանակ նաև աղմուկից պաշտպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով.

$$L_{\text{աղ}} = 23 * \lg * m_{\text{է}} - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^3$$

$$L_{\text{աղ}} = 13 * \lg * m_{\text{է}} - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^3$$

Որտեղ $m_{\text{է}} = K * m$ - մակերեսի խտության էկվիվալենտն է,

m - մակերեսի խտությունն է, կգ/մ^3 ,

K - գործակից է, որի հաշվի է առնում մետաղական պատնեշի խտությունը, որը 7850 կգ/մ^3

$$m_{\text{է}} = 7850 * 1 = 7850$$

$$L_{\text{աղ}} = 23 * \lg * m_{\text{է}} - 13 = 23 * \lg(7850) - 13 = 23 * 3.894 - 10 = 89.562 - 10 = 79.56 \text{ դԲ}$$

Շինարարական հրապարակից դուրս աղմուկի մակարդակը կազմում է՝

Հողային աշխատանքների փուլ

$$LA_{\text{տար}} = LA_{\text{էկվ}} - L_{\text{աղ}} = 87.15 - 79.56 = 7.59 \text{ դԲ}$$

Շենքերի կառուցման փուլ

$$LA_{\text{տար}} = LA_{\text{էկվ}} - L_{\text{աղ}} = 92.79 - 79.56 = 13.23 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակը հողային աշխատանքների փուլում կկազմի 7.59 դԲ , իսկ շենքերի կառուցման փուլում՝ 13.23 դԲ , ինչը նորմայից բավականին ցածր է:

Աշխատանքները իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

6.1.5 Սոցիալական ազդեցություն

Շինարարության ընթացքում շինարարական հրապարակի հարակից տներում բնակվող բնակիչները կարող են ենթարկվել սոցիալական բնույթ կրող որոշակի անբարենպաստ ազդեցությունների (աղմուկ, փոշի, երթևեկության ժամանակավոր խաթարումներ և այլն), որոնք միասին կարող են առաջացնել գումարային ազդեցություններ: Սակայն դրանք տեղի են ունենալու միայն շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, լինելու են կարճաժամկետ և էականորեն մեղմացվելու են հատուկ միջոցառումների իրականացման շնորհիվ:

Շինարարական աշխատանքներից հետո, մինչ այն վերջնական հանձնելը, կապալառուն պարտավոր է լինելու բարեկարգել տարածքը՝ հեռացնելով շինարարության հետ կապված նյութերն ու թափոնները:

Փոշին, դիզելային վառելիքի այրման արգասիքները, աղմուկի մակարդակի ավելացումը նույնպես բացասաբար կարող է անդրադառնալ բնակչության վրա, իսկ երթևեկության հնարավոր ինտենսիվացումը ժամանակավոր անհարմարություններ կարող է ստեղծել գոյություն ունեցող ճանապարհով երթևեկության համար:

Հարկ է նշել, որ շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բանվորական և սպասարկող անձնակազմը կհավաքագրվի տեղի բնակչությունից, ինչը դրական ազդեցություն կունենա բնակչության կենսամակարդակի վրա:

Նախատեսվող գործունեության արդյունքում նախատեսվում է տեղի ենթակառուցվածքների զարգացում և մի շարք սոցիալական խնդիրների լուծում:

6.1.6 Ազդեցություն բուսական և կենդանական աշխարհի վրա

Բուսական աշխարհ: Շինարարական աշխատանքների ընթացքում բուսատեսակների և կենդանատեսակները վրա ազդեցություն չի նախատեսվում, քանի որ բոլոր աշխատանքները տեղի են ունենալու քաղաքային միջավայրում:

Կենդանական աշխարհ: Գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են կենդանատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի բնակեցված և կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

6.1.7 Մշակութային ժառանգություն

Գործունեության ենթակա և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Ուստի հնարավոր անբարենպաստ ազդեցություններ վերջիններիս վրա չի ակնկալվում:

Համալիրի շինարարական աշխատանքների ընթացքում մշակութային ժառանգության կամ հնագիտական հետաքրքրություն ներկայացնող որևէ իր հայտնաբերվի ապա պետք է աշխատանքները դադարեցվեն:

Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է հիմք ընդունել՝ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՕ-261 օրենքով (11.10.1998թ.) սահմանված պահանջները, Համաձայն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին՝ տվյալ դեպքում ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

6.1.8 Աշխատողների սանիտարակենցաղային և հիգիենիկ պահանջներ

Ըստ շինարարության կազմակերպման նախագծի և համաձայն «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի, աշխատողների սանիտարակենցաղային պայմանները ապահովելու նպատակով շինհրապարակը հագեցված է լինելու՝

- աշղեկի շարժական տնակներով,
- բիոզուգարաններով,
- հանդերձարաններով

- ցնցուղարաններով,
- լվացարաններով,
- հանգստի սենյակներով
- սննդի ընդունման շարժական կետերով
- աշխատողների կարիքների համար անհրաժեշտ ջրի տարա,

Շինհրապարակը առանձնանալու է համապատասխան նշաններով՝ անվտանգության նորմատիվների համաձայն:

Շինհրապարակում բիոզուգարանների տեղադրումը և դրանց հետագա սպասարկումը իրականացվելու է տվյալ ոլորտում մասնագիտական ծառայություն մատուցող կազմակերպության միջոցով:

6.1.9 Լանդշաֆտ

Գործունեության իրականացումը չի առաջացնելու լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն, քանի որ այն կառուցվելու է գոյություն ունեցող կառուցապատման տարածքում: Նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր փաստակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը տարածքի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ:

Դրանք հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում՝ բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում:

Նախատեսվող համալիրը ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն է՝

- շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում,
- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են, շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը,
- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

6.1.10 Սոցիալ-տնտեսական հետևանքներ

Ներկայացվող գործունեության իրականացումը կնպաստի և կխթան շրջակա միջավայրի վերականգնմանը և համայնքի ընդհանուր բարելավմանը:

Այս ամենի իրականացման արդյունքում կստեղծվեն հավելյալ մշտական և ժամանակավոր աշխատատեղեր և տնտեսական օգուտներ:

Բացի վերոնշյալից ծրագրի իրականացումը նաև հնարավորություն կստեղծի բնակիչների համար ունենալու ժամանակավոր աշխատանք՝ նրանց ներգրավվելով իրականացվելիք շինարարական աշխատանքներում:

- Շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ անձնակազմի զգալի մասը կհավաքագրվի տեղի բնակչությունից, ինչը դրական ազդեցություն կունենա բնակչության կենսամակարդակի վրա:
- Աշխատանքների ընթացքում կգարգանան տեղի ենթակառուցվածքները, կլուծվեն մի շարք սոցիալական խնդիրներ:

Ամփոփելով շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները, հարկ է նշել, որ այդ աշխատանքները պետք է կատարվեն այնպես, որպեսզի կանխվեն շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները և առավելագույնս պահպանվի բնական լանդշաֆտ, որի համար հիմք կհանդիսանա բնապահպանական կառավարման պլանում սահմանված ռիսկերի մեղմացման միջոցառումների պատշաճ իրականացումը:

7. ՀՐԱՊԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախտաբանական ալկոտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

7.1 Ռիսկերի գնահատում

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի անբարենպաստ ազդեցություններ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները իրենց բնույթով կլինեն սահմանափակ, կարճատև և պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ՝

- Քանդման աշխատանքների իրականացման ժամանակ

- Ինժեներական եվ կիրառական գիտությունների համալիր շինարարության ընթացքում
- Հիմքերի փորման ընթացքում
- Դիզեյնային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:
- Հողային զանգվածների և շինադրի տեղափոխման հետ կապված,
- Բետոնային աշխատանքների իրականացմամբ,
- Շինհրապարակների տեղադրման հետ կապված,
- Շինարարության ընթացքում մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից պատճառով ու անհանգստությամբ
- Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

7.2 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

7.2.1 Մթնոլորտային օդ

Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված անօրգանական փոշու և ծխազագերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են շինարարական տեխնիկայի աշխատանքի դեպքում: Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի՝

1) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:

2) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ:

3) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով:

4) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս: Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն հասանելի

տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները:

5) հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ:

6) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով:

7) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

8) պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:

9) շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում կապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների առկայությունը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ, որի տեխնիկական չափորոշիչները և հասանելիության պայմանները սահմանվում են Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

7.2.2 Ջրային ռեսուրսներ

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Մոտակա ջրային ռեսուրսը Հրազդան գետն է, որը գտնվում է 87 մ հեռավորության վրա և կառուցապատման ենթակա հողամասի սահմաններից 6-17մ հեռավորության վրա անցնող ջրատար առու: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են առանձնացված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի հնարավոր արտահոսքերը և արտանետումները դեպի մակերևութային և/կամ ստորերկրյա ջրային ռեսուրսներ:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմվելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր դեպի Հրազդան գետ և հարևանությամբ գտնվող ջրատար առու, հաշվի առնելով որ տարածքը ունի անկումային ռելեֆ
- տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման հոսքաջրերը ներքին բակային ցանցով ուղղվելու են շինհրապարակում տեղադրված պարզարան, պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
- անձրևաջրերը և շինարարական, շինարարական տեխնիկայի անվադողերի լվացումից առաջացող հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան, պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների ժամանակավոր կայանումը իրականացվելու է մակերևութային ջրային ռեսուրսներից հեռու
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով

7.2.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային զանգվածը մինչև օգտագործելը կամ տեղափոխելը պահվելու է շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- Շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների կամ անջրթափանց հիմքով բետոնապատ մակերեսների վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոխված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրից:

7.2.4 Արտակարգ իրավիճակներ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացում՝ կապված բնական աղետների, սողանքների, հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի և շահագործվող շինտեխնիկայի վթարների հետ:

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- կառույցների հիմքերի փոստրակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի(երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը,

- տեղադրվելու են տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է նախագծողի, շինարարի և վերահսկողի վերաբերյալ տեղեկատվություն (անվանում, կոնտակտային տվյալներ և այլն), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:

- շինհրապարակը կազմակերպվելու է հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան,

- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,

- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ մաքրվելու են հրդեհավտանգ և պայթուցավտանգ թափոններից և աղբից,

- հակահրդեհային միջտարածությունները չեն օգտագործվելու նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

- բաց են լինելու նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրվելու են դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ,

- տեղադրվելու են ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,

- հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:

7.2.5 Աղմուկ և թրթռում

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերով: Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը, սակայն հնարավոր բոլորքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ, իսկ շինարարության ընթացքում որպես կարևորագույն միջոցառումներ, անհրաժեշտ է՝

- Խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց մասնավոր բնակելի տների, փոքր բիզնեսի կետերի, այլ հասարակական շենքերի հարևանությամբ;
- Աղմուկ առաջացնող աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:
- Բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:

7.2.6 *Կենսաբազմազանություն*

Բուսական աշխարհ. Շինարարական աշխատանքների ընթացքում բուսատեսակների վրա ազդեցություն չի նախատեսվում, քանի որ բոլոր աշխատանքները տեղի են ունենալու քաղաքային ակտիվ միջավայրում:

Տարածքում առկա ծառերը պահպանվելու են, ծառահատումներ չի նախատեսվում:

Կենդանական աշխարհ. գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են կենդատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի արդեն իսկ կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

7.2.7 *Թափոնների կառավարում*

Ինժեներական եվ կիրառական գիտությունների համալիրի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակը և հարակից տարածքը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից,
- շինարարական հրապարակում առանձնացնել է շինարարական և կենցաղային աղբի նախնական կուտակման վայրը,
- շինարարական թափոնները հնարավորինս կտեսակավորվեն/կառանձնացվեն մետաղները, փայտերը և այն ամենը ինչը հնարավոր կլինի վերաօգտագործել շինարարական աշխատանքների ընթացքում՝ կվերաօգտագործվի և մնացած մասը կտեղափոխվի հատկացված վայր,
- կառուցապատման փուլում կենցաղային աղբը հավաքվելու է աղբահավաք տարողությունների մեջ և հեռացվելու է տարածքից մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- բացառվելու է կենցաղային աղբի այրումը,

- շինադրի և քանդված հանված հողային զանգվածների տեղափոխումը դեպի հատկացված վայր իրականացվելու է փակ ծածկ ունեցող բեռնատարներով,
- բացառվելու է ադրի նախնական կուտակումը շինարարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացվելու է տարածքի բարեկարգում՝ տարածքից հեռացնելով բոլոր տեսակի շինարարական նյութերի մնացորդները:
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Ինժեներական եվ կիրառական գիտությունների համալիրի կառուցման ընթացքում առաջացող շինարարական ադրն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

7.2.8 *Լանդշաֆտ*

Գործունեության իրականացումը չի առաջացնելու լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն, քանի որ այն կառուցվելու է գոյություն ունեցող կառուցապատման տարածքում: Նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը տարածքի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ:

Դրանք հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում՝ բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում:

- Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.
- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,
- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը,
- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

7.2.9 *Տարածքի բարեկարգում կանաչապատում*

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել:

Կանաչապատ տարածքների ոռոգումն ջուրը կմատակարարվի ԹՈՒՄՈ համալիրի ոռոգման ցանցից:

Ծառատեսակների համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառափուտային բուսականության բարձր աճը և կաչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

7.2.10 *Էներգախնայողության միջոցառումներ*

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները

- Օդատաքացուցիչների և օդասառեցուցիչների հզորության ավտոմատ կարգավորում .
- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում.
- Բարձր թերմիկ դիմադրությամբ և արևաթափանցելության փոքր տոկոս ունեցող պատուհաններ
- Օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով.
- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Օդորակման բարձր արդյունավետության համակարգի կիրառում
- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ դեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում
- Տաք ջրի պատրաստման համար նախատեսված արևային ճնշումային ջրատաքացուցիչների կիրառում

7.2.11 *Շահագործման փուլ*

Շահագործման ընթացքում՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով է պետք է լավագույնս իրականացվեն համալիրի և ենթակառուցվածքների սպասարկման ծառայությունները:

Նոր կառուցված համալիրը, ինչպես նաև հարակից ենթակառուցվածքների պատշաճ շահագործումն ու սպասարկումը թույլ կտա նվազեցնել անվտանգության ռիսկերը, որոնք պարբերաբար պետք է ստուգվեն և պահվեն համապատասխան աշխատանքային պայմաններում:

Պետք է ապահովվի արտակարգ իրավիճակներում արձագանքման պատրաստվածության կարգը, որպեսզի ժամանակին և համարժեք արձագանք տրվի այն քաղաքացիներին, որոնք կհայտնվեն արտակարգ իրավիճակներում:

Ըստ անհրաժեշտության պետք է իրականացվեն աղմուկի նվազեցման պատշաճ միջոցառումներ:

Պետք է իրականացվի ենթակառուցվածքների և այլ կոմունիկացիաների պատշաճ սպասարկում, ներառյալ պարբերաբար ստուգումներն ու ըստ անհրաժեշտության վերանորոգման աշխատանքների իրականացումը:

Պետք է շահագործման ընթացքում պատշաճ կերպով իրականացվի կենցաղային աղբի հեռացում:

Ինժեներական և կիրառական գիտությունների համալիրը կլինի բազմաֆունկցիոնալ շենք, որը կմիավորի ակադեմիան և արդյունաբերությունը՝ կապելով ուսանողներին, հետազոտողներին և տեխնոլոգներին, միմյանց և իրենց համաշխարհային գործընկերների հետ և նպաստելով նորարարության և ձեռներեցության զարգացմանը:

8. ՄՇԱՐԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Ինժեներական եվ կիրառական գիտությունների համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացման ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամենօրյա հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 875 հազ. դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով		175000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	10x40000	400000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	10x30000	300000
Ամբողջ շինարարության համար		875000

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝ (a) 1) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով. (b) 2) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ. (c) 3) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով. (d) 4) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս. Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները. (e) 5) հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ. (f) 6) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով. (g) 7) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով: (h) 8) պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում: (i) 9) շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում կապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների առկայությունը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ, որի տեխնիկական չափորոշիչները և հասանելիության պայմանները սահմանվում են Երևանի

		քաղաքապետի որոշմամբ:
	Աղմուկ	(j) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (k) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն (e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվագ օգտագործել
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով, (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում:
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում

